

Ա. Վ. ԶԾԻԴԻՏ

НАУКА
ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ
ИНСТИТУТ
Академия Наук
СССР

ՄԱՐԴՆ ԻՆՉՊԵՍ ՄԱՐԴ ԴԱՐՁԱՎ

ԿՈՒՄՅՈՒՆԻՅՈՒՄ 1934 ՅԵՐԵՎԱՆ

59

Ե-72

20 JUL 2010

54-771
Ua 208

S9
6-72

Պրոկտորներ քուր յերկրների միացն'ը

Ե. Վ. ՂԱՐԻՏ

ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

ՄԱՐԴՆ ԻՆՉՊԵՍ ՄԱՐԴ ԴԱՐՁԱՎ

Թարգմ. Բ. Յեղիազարյան
Խմբ. Վ. Թարախչյան





59072-66

А. В. Шмидт

Как человек стал человеком

Партиздат 1934 Эривань

1. ԱՍՏՎԱԾԱԾՆՉՈՒՄ ԳՐՎԱԾԻՆ ԿԱՐԵԼԻ՞ ՅԵ ՀԱՎԱՏԱԼ

ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐՆ Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ԲԱՅԱՏՐՈՒՄ
ՄԱՐԴՈՒ ՅԵՐԵՎԱՆ ԳԱԼԸ ՅԵՐԿՐԻ ՎՐԱ

Հավատացյալ մարդիկ ասում են, վոր աստված ստեղծեց մարդուն: Նրանք պատմում են, վոր աստված աշխարհն ստեղծեց հինգ որում, իսկ վեցերորդ որում վճռեց մարդուն ստեղծել: Այդ գործն սկսելուց առաջ աստված ինքն իրեն ասաց. «Մարդուն ստեղծենք մեր պատկերով և նմանությամբ»: Հետևաբար, հավատացյալների կարծիքով, մարդը նման է այն աստծուն, վորին մարդիկ են հնարել:

Հավատացյալները պատմում են, վոր առաջին մարդու անունը Ադամ էր: Աստված նրան դրախտում տեղավորեց: Վորպեսզի մարդը չձանձրանա, աստված նրա կողերից մեկը հանեց և նրանից պատրաստեց առաջին կնոջը: Նրա անունը Յեվա յեր:

Հավատացյալները վորտեղից են վերցրել այս ամենը: Դրա մասին տերտերներն են պատմում: Իսկ տերտերները մարդու ստեղծագործություն մասին աստվածաշնչից գիտեն:

ԿԱՐԵԼԻ՞ ՅԵ ԱՐԴՅՈՒ ՀԱՎԱՏԱԼ ԱՍՏՎԱԾԱԾՆՉԻ ԱՎԱՆԴՈՒ- ԹՅԱՆԸ ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Յեթե ուշադրությունը ենք կարդում աստվածաշունչը, իսկույն աչքի յեն ընկնում ամեն տեսակ անհեթեթություններ: Այսպես՝ որինակ, աստվածաշնչում գրված է, վոր աստված սկզբում ստեղծեց լույսը, իսկ հետո՝ արևը: Դուրս է գալիս, վոր լույսը արևի ստեղծագործությունից առաջ գոյություն ունի: Սակայն, ամեն մի գալրոցական աշակերտ գիտե, վոր լույսը արևից է առաջ գալիս: Ուրեմն, այն՝ ինչ վոր գրված է աստվածաշնչում, ճիշտ չէ:

Աստվածաշնչի առաջին գլխում ասվում է նաև, վոր սկզբում աստված ստեղծեց բույսերը, իսկ հետո մարդուն ստեղծեց: Իսկ յերկրորդ գլխում պատմվում է, վոր սկզբում աստված մարդուն ստեղծեց, իսկ հետո՝ բույսերը: Դուրս է գալիս, վոր աստվածաշունչը ինքն իրեն հակասում է:

Վերջապես առաջին գլխում ասվում է, վոր աստված Ադամին և Յեփային միաժամանակ ստեղծեց, իսկ ըստ յերկրորդ գլխի դուրս է գալիս, վոր սկզբում Ադամն ստեղծվեց, իսկ Յեփան ավելի ուշ ստեղծվեց իր ամուսնու կողից: Աստվածաշնչում կարելի չէ դարձյալ շատ ուրիշ անճշտություններ և հակասություններ գտնել:

Ամեն մի գիտակից մարդ հասկանում է, վոր չի կարելի հավատալ մի գրքի, վորի մեջ իրար չբռնող բաներ են գրված: Ամեն վոր հասկանում է, թե չի կարելի հավատալ մի գրքի, վորի մեջ մեկ եջում ասվում է մի բան, իսկ մյուս եջում ուղղակի հակառակը:

Աստվածաշնչի պատմվածքին հավատալ չի կարելի: Կրոնական բոլոր ուսմունքները միայն շքմեցնում են, մթազնում աշխատավորների գիտակցությունը, վորպեսզի նրանց տգիտության մեջ պահեն, վորպեսզի ավելի հեշտ լինի նրանց շահագործելը: Բայց ինչպես իսկապես առաջ յեկավ մարդը: Վո՞րտեղից ծագեց նա:

Այդ մասին շատ են մտածել գիտնական մարդիկ: Այդ հարցերն ավելի ճիշտ լուծելու համար գիտնականները ուշադրությամբ ուսումնասիրում եյին մարդու մարմնի կառուցվածքը: Նրանք ուսումնասիրում եյին նաև այն մարդկանց վոսկորները, վորոնք ապրելիս են յեղել հնագույն ժամանակներում: Բացի գրանից, նույն այդ նպատակով գիտնականները հետազոտում եյին զանազան կենդանիների կառուցվածքը, որինսկ՝ կապիկներինը, շներինը, գորտերինը և ուրիշ կենդանիներինը:

Յերկար և մանրակրկիտ հետախուզություններից հետո գիտնականները միաձայն այն կարծիքին յեկան, վոր աստվածաշնչի պատմվածքը՝ մարդու ստեղծագործության մասին, առասպել է, վորի մեջ մի հատիկի չափ անգամ ճշմարտություն չկա:

Բայց ինչպես իսկապես առաջ յեկավ մարդը:

2. ԱՇԽԱՐՀԸ ՎԱՂՈՒՅ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԱՐԴՅՈՔ

Քրիստոնեյական յեկեղեցին ընդունում է, վոր աշխարհի ստեղծագործությունից մինչև Հիսուս քրիստոսի յերևակայական ծնունդը 5508 տարի չէ անցել: Իսկ քրիստոսի ծննդից մինչև ներկա տարին — 1931 տարի:

Ընդամենը աշխարհի ստեղծագործությունից մինչև ներկա տարին դուրս է գալիս 7439 տարի:

Ուրեմն, յեթե հավատանք աստվածաշնչի գրվածին, ապա ամբողջ աշխարհը, արևը, բոլոր աստղերը, յերկրագունդը, լուսինը գոյություն ունեն ընդամենը մոտավորապես յոթ և կես հազար տարի:

Այդքան տարի յել, ըստ աստվածաշնչի, գոյություն ունի նաև մարդկային ցեղը: Ըստ աստվածաշնչի պատմվածքի՝ առաջին մարդն ստեղծվել է արևից և աստղերից միայն յերկու որ հետո:

Ճիշտ է, վոր աշխարհը 7439 տարի գոյություն ունի: Վո՞չ, ճիշտ չի: Ինչպես ապացուցեցին գիտնականները, արևը շատ միլիարդ տարի գոյություն ունի: Այդ թիվը պատկերացնելը նույնիսկ դժվար է: Իսկ շատ աստղեր ել ավելի յերկար ժամանակ գոյություն ունեն: Թե ինչպես ծագեցին աստղերը, արևը և յերկրագունդը, այդ մասին կարելի չէ կարգալ ասողաբաշխությանը նիվիրված գրքերում:

Ճիշտ է արդյոք, վոր արևը, յերկիրը, բույսերը և կենդանիները գրեթե միաժամանակ են առաջ յեկել: Վո՞չ, ճիշտ չի: Յերկիրն սկզբում չիկացած էր: Այն ժամանակ նրա վրա, իհարկե, վո՞չ մի բույս և վո՞չ մի կենդանի չկային: Հետո նա սկսեց սառչել և այն ժամանակ միայն նրա վրա գոյացան առասեց սառչել և այն ժամանակ միայն նրա վրա գոյացան առաջին կենդանի եյակները: Այդ բանը տեղի ունեցավ, ինչպես ասացուցում են գիտնականները, յերկրի կազմվելուց միլիարդավոր տարիներից հետո:

Բոլոր կենդանի եյակները միաժամանակ չերևացին յերկրի վրա: Սկզբում յերևան յեկան ճիճուները, խեցգետինները, խխունջները և նրանց նմանները: Ավելի ուշ, շատ միլիոնավոր տարի-

ներից հետո, գոյացան ձկները: Դարձյալ շատ միլիոնավոր տարիներից հետո յերևացին կաթնասուն անասունները: Կաթնասուն են անվանում այն կենդանիներին, վորոնք իրենց ձագերին կաթով են կերակրում, ինչպես կատուն իր ձագերին, կովն իր հորթերին: Այդ ժամանակում յերկիրը շատ բանով նմանվեց այժմյանին: Միայն նրա վրա դեռ մարդ չկար:

Դուրս ե գալիս, վոր աստվածաշնչի ասածը ճիշտ չի: Յերկնային լուսատուները—աստղերը, արեւ—կենդանիների զանազան տեսակները յերևացին տարբեր ժամանակներում: Նրանց առաջ գալու միջև վոչ թե յերկու ուր, այլ շատ միլիարդավոր տարիներ անցան:

Յերկար ժամանակ յերկիրը գոյություն ուներ առանց մարդու: Նրա վրա աճում էին զանազան տեսակի բույսեր և բազմաճյուղ զանազան տեսակի կենդանիներ: Բույսերն ու կենդանիները շատ քիչ նմանություն ունեին այժմյանների հետ:

ԻՍԿ ՅԵՐԲ ՅԵՐԵՎԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԻԿ

Առաջին կաթնասունների յերևուլոց հետո անցավ ելի միջանի տառնյակ միլիոնավոր տարի և միայն այն ժամանակ յերևացին առաջին մարդիկ: Գիտնականներն ապացուցեցին, վոր առաջին մարդիկ մոտավորապես մեկ միլիոն տարի առաջ յերևացին: Մենք արդեն գիտենք, վոր առաջին կենդանիները յերկրի վրա յերևացին հարյուրավոր միլիոն տարիներ առաջ: Իսկ աստվածաշնչում գրված է, վոր արեւից և յերկնային լուսավորներից յերկու ուր հետո յե ստեղծվել մարդը:

ՄԱՐԴԻԿ ԱՐԴՅՈՒՄ ՄԻՇՏ ԵՆ ԱՊՐԵԼԻՍ ՅԵՂԵԼ ՅԵՐԿՐԻ ՎՐԱ

Վոչ, վոչ միշտ: Ինչպես արդեն ասված է, յեղել է մի ժամանակ, յերբ յերկրի վրա մարդիկ չեն յեղել: Աճում էին ծառեր և ամեն տեսակի բույսեր, յեղել են ցամաքային և ջրային կենդանիներ, ողում թռչելիս են յեղել զանազան թռչուններ և միջատներ, բայց մարդիկ չեն յեղել: Այդպիսի ժամանակը շատ յերկար է տևել—հարյուրավոր միլիոն տարիներ:

ՎԱՂ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՆՉՊԻՍԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ ԱՊՐԵԼ ՅԵՐԿՐԻ ՎՐԱ

Յերկրի մեջ հաճախ այնպիսի կենդանիների վոսկորներ են պատահում, վորոնք վաղ ժամանակներում ապրել են յերկրի վրա: Որինակ՝ գտնվում են մամոնտի վոսկորներ, ժանիքներ և ատամներ: Մամոնտը փղի նման մի ահազին զազան է: Այժմ այլևս մամոնտներ չկան: Նրանք բոլորն ել մեռել-անհետացել են:

Յերկրի մեջ պատահում են այնպիսի կենդանիների վոսկորներ, վորոնց վոտոսկրը մեծությամբ մարդու հասակի չափ է: Վոսկորների կազմությունից և ձևից գիտնականները վորոշեցին, վոր այդ վոսկորները պատկանում էին այժմյան մողեսի նման մի կենդանու: Այժմյան մողեսները փոքր են: Այժմ շատ խոշոր մողեսներ չկան: Իսկ առաջվա ժամանակներում, ինչպես վոսկորներից է յերևում, նրանք կային:

Գտնվում են այնպիսի մանր կենդանիների մնացորդներ, վորոնք քիչ են նման այժմյաններին: Որինակ՝ թևավոր մողեսների վոսկորներ են գտնվել: Թևավոր մողեսներ չկան այժմ:

Գտնվել են այժմ գոյություն չունեցող թռչունների վոսկորներ: Նրանց վոսկորների մեծ մասը նման է այժմյան թռչունների վոսկորներին: Բայց կան և տարբեր վոսկորներ: Նրանց կաուցների մեջ ատամներ են տեսել: Այժմ ատամնավոր թռչուններ կան արդյոք: Ամեն վոք գիտե, վոր այժմ այդպիսի թռչուններ չկան: Իսկ առաջներում նրանք պատահում էին: Անկ խոսքով, յերկրի մեջ հաճախ այնպիսի կենդանիների վոսկորներ են պատահում, վորոնց այժմ յերկրի վրա չես տեսնի և վորոնք նույնիսկ մարդկային հիշողությունից են անհետացել:

ԱՆՃԵՏԱՑԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎՈՍԿՈՐՆԵՐՆ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԳՏՆՈՒՄ

Նախկին, այժմ մեռած-անհետացած, կենդանիների մնացորդները սովորաբար գտնում են յերկրի խորքում: Նրանք յերկրի մակերևույթի վրա միայն այն ժամանակ են պատահում, յերբ ջուրը վողողում-տանում է հողը կամ թե չե փլուզում, խրամատ

ե անաջ գալիս: Ուստի այդպիսի վոսկորներ հաճախ գտնուում են
այն գետերի մոտերքում, վորոնք ամեն գարնան վողողում են
իրենց ավերը: Այդպիսի վոսկորներ ել ավելի հաճախ պատահում
են հանքափորական աշխատանքներ կատարելիս:

ՄԵՌԱՆ-ԱՆՃԵՏԱՅԱՆ. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎՈՍԿՈՐՆԵՐԸ ԻՆՉ ԿԵՐՊՈՎ ԵՆ ԸՆԿՆՈՒՄ ՅԵՐԿՐԻ ԽՈՐԲԸ

Շատերն այդ բանը չեն հասկանում: Այդպիսի մարդիկ ասում
են. այդ խնչպես կլինի. գազանն իրեն համար թափառում է
յերկրի վրա, հետո սատկում է և հանկարծ նրա վոսկորները
գտնվում են յերկրի խորքում: Ինչպես կարող եր պատահել այդ:
Այստեղ զգվարիմաց և հրաշալի փոշինչ չկա: Բանը քացատրվում
է շատ պարզ: Յերբ գազանը սատկում եր, նրա դիակը մնում
եր ընկած գետնին: Տարիներ ելին անցնում: Գազանի միսը, շղերը
փտում և հող ելին դառնում: Վերելից՝ ծառերից, չոր տերեւներ
եյին թափվում, վորոնք փտում և նույնպես հող ելին դառնում:
Գամին փոշի և ավազ եր վրա տալիս: Յեթե ցածրադիր տեղ եր
լինում, այդ դեպքում անասն անձրեկից հետո շուրը հող, ավազ,
կավ եր բերում: Ուրիշ մանր և խոշոր կենդանիներ սատկում ելին
միևնույն տեղում, փտում և նույնպես հող ելին դառնում: Վոսկոր-
ների մոտերքում, պարարտ հողի վրա, բույսեր ելին աճում:
Հետո նրանք թառամում ելին, փտում և նույնպես հող ելին դառ-
նում:

Այդպես անցնում ելին յերկար տարիներ: Հազարավոր տարի-
ներից հետո նույն տեղում, վորտեղ գազանը սատկեց, շատ
հող եր կուտակվում: Այդ հողը ծածկում եր գազանի վոսկորները
և նրանք այլևս չեյին տեսնվում: Ելի հազարամյակներ ելին անց-
նում և ել ավելի հող եր ավելանում գազանի վոսկորների վրա:
Այս կերպով այդ վոսկորները մնում ելին յերկրի խորքում: Այդ
վոսկորները վոչ վոք չեը թաղում: Ինքը հողն եր ղրկվում նրանց
վրա:

Իսկ վոք վոսկորներն ավելի խոր տեղումը կլինեն: Իհարկե,
այն կենդանիների վոսկորները, վորոնք ավելի վաղ են ապրել,
ավելի խոր տեղ կընկնեն: Այս ձևով գիտնականներն իմացան,
թե վոր կենդանիներն ավելի վաղ են ապրել և վորոնք՝ ավելի ուշ:

ՄԱՐԴՈՒ ՎՈՍԿՈՐՆԵՐ ՊԼՏԱՅՈՒՄ ԵՆ ԱՐԴՅՈՒ ՅԵՐԿՐԻ ԽՈՐ ՇԵՐՏԵՐՈՒՄ

Յերևաց, վոր վոչ: Ավելի խոր շերտերում պատահում են
բազմազան կենդանիների վոսկորներ, իսկ մարդու վոսկորներ
չկան: Պատահում են ձկների, թռչունների, մողեսների և ուրիշ
սողունների վոսկորներ. պատահում են խեցեպայտաններ, խեց-
գետնիների և ուրիշ ջրային կենդանիների մնացորդներ: Իսկ մար-
դու վոսկորներ չեն գտնում: Մարդու վոսկորներ պատահում են
միայն յերկրի վոչ խոր շերտերում:

Ուրեմն, դուրս է գալիս, վոր յեղել է մի ժամանակ, յերբ կենդա-
նիներն արդեն գոյություն են ունեցել յերկրի վրա, իսկ մարդիկ
չեն յեղել: Դուրս է գալիս, վոր մարդիկ շատ ուրիշ կենդա-
նիներից ավելի ուշ են յերևացել: Յերկրը շատ յերկար ժա-
մանակ գոյություն է ունեցել անոնց մարդու: Կարելի յե ասել,
մարդիկ գոյություն է ունեցել ավազահատիկից, այնքան ել
վոր ինչքան սարն ավելի մեծ է ավազահատիկից, այնքան ել
կենդանական աշխարհի գոյության տևողությունը ավելի շատ
է մարդկային ցեղի գոյության տևողությունից:

3. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎՈՐ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԱՄԵՆԱՄՈՏԻԿ ՆԱԽՆԻՔԸ

Մարդիկ կարող ելին արդյոք իրենք իրենց սուսջ գալ: Վոչ.
վոչ մի կենդանի եյակ ինքն իրեն չի գոյանում: Միայն հեքիաթ-
ների մեջ հսկայի մեկ խոսքով յերևան են գալիս բարի ձին կամ
սևահոնք աղջիկը: Բայց հեքիաթներումն ել այդ չի լինում:

Իսկ կյանքի մեջ այդ չի լինում: Ամեն մի կենդանի ծըն-
վում է ուրիշ կենդանի եյակներից: Դատարկ տեղում կենդա-
նիները չեն կարող իրենք իրենց գոյացնել: Յերբեմն ասում են,
վոր լվերը անաջ են գալիս փոշուց: Ճիշտ է, վոր այնտեղ, վորտեղ
շատ փոշի կա, լվերը հաճույքով կուտակվում են և բեղմնավորվում:
Սակայն, լվերը բեղմնավորվում են իրենց նմաններից: Իսկ յեթե
փոշին հավաքենք, լցնենք մի պուլիկի—բանկայի—մեջ, բերանը
լավ փակենք, վորպեսզի վոչ մի բան չկարողանա սողոսկել այն-
տեղ, այդ տեսակ պուլիկի մեջ վոչ մի լու չի յերևա, ինչքան
ել վոր փոշի ճխտենք այնտեղ:

Քանի վոր բոլոր եյակները ծնվում են վորեւ մեկից, ապա ուրեմն մարդիկ ել պետք ե վորեւ մեկից ծնվելին: Իրենք իրենց նրանք առաջ գալ չեյին կարող:

Սրան հավատացյալները կասեն. առաջին մարդիկ վոչ վորից չեն ծնվել, աստվածաշնչի մեջ ասված ե, վոր նրանց աստված ստեղծեց: Բայց մենք արդեն գիտենք, վոր աստվածաշնչին հավատալ չի կարելի: Յեւ մենք ել՝ ձեզ հետ միասին նրան չենք հավատա, այլ ավելի լավ ե իմանանք, թե ինչ են ասում գիտնականները մարդու ծագման մասին:

ԻՆՉՊԵՍ ԻՄԱՅԱՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ, ԹԵ ՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ԵՆ ՄԵՐ ՆԱԽՆԻԲԸ

Ամեն մարդ գիտե, վոր յերեխաները հաճախ նման են լինում ծնողներին: Թուները նման են լինում պապերին, թեպետև մի փոքր ավելի պակաս չափով: Նմանությունը թուներդիների և նախապապերի միջև ել ավելի պակաս ե լինում, սակայն՝ ինչպես վոր կարելի յե տեսնել այդ հին պատկերներով, նրանք այնուամենայնիվ մի փոքր նման են իրար: Մեկ խոսքով՝ նախնիքների և հետնորդ սերունդների միջև նմանություն կա: Ազգականների միջև նույնպես վորոշ նմանություն կա, իսկ ոտար մարդկանց միջև այդ նմանությունը հազվադեպ ե: Ամենքը գիտեն այս:

Միևնույն բանը կարելի յե ասել նաև ամբողջ մարդկային ցեղի մասին: Այն կենդանի եյակները, կենդանիների այն տեսակները, վորոնք ավելի մոտիկ ազգակից են մարդկանց, ավելի նման են նրանց, քան մյուսները:

Ձուլիկները զանազան կենդանիներին և տեսենք, թե նրանցից ով ավելի նման ե մարդուն: Այդ ձևով գիտնականներն իմացան, թե կենդանիների վոր տեսակները մարդու ամենամոտիկ նախնիքն են հանդիսանում:

Յեթե վերցնենք, որինակ, ճիճուներին կամ խխունջներին, կտեսնենք, վոր նրանց և մարդկանց միջև վոչ մի նմանություն չկա: Մեծության մասին խոսելու հարկ ել չկա: Ծիճուներն ու խխունջները փոքրիկ կենդանիներ են: Մարդկանց մարմնի հենարանը վոսկորներից կազմված կմախքն ե, ճիճուներն ու խխունջները վոչ մի վոսկոր չունեն: Մարդիկ ձեռքեր և վոտքեր ունեն:

ճիճուներն ու խխունջները վոչ մի վերջավորություն չունեն:

Այդպես ել ամենքին հասկանալի յե, վոր մարդկանց և միջատների միջև նմանություն չկա: Ըստ մեծության վոչ մի համեմատություն լինել չի կարող: Ամենամեծ միջատը՝ մարդու համեմատությամբ, բողոճն ե: Մարմնի կառուցվածքի մեջ տարբերությունը նույնպես մեծ ե: Միջատները կմախք և վոսկորներ չունեն: Ընդհակառակը, նրանց իրանը զրսից կոշտ ե, իսկ ներսում վոչ մի պինդ մաս չկա:

Խխունջները, ճիճուները, միջատները նման չեն մարդկանց: Թեպետև նրանք մարդկային ցեղից ավելի վաղ գոյություն ունեյին, սակայն նրանց չի կարելի մեր ամենամոտիկ նախնիքը համարել:

ԿԱՐԵԼԻ՞ ՅԵ ԱՐԴՅՈՒՎ ՎՈՂՆԱՇԱՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ՄԵՐ ՆԱԽՆԻԲԸ ՀԱՄԱՐԵԼ

Ավելի նմանություն կա մարդու և վողնաշարավոր կենդանիների միջև: Վո՞ր կենդանիներն են կոչվում վողնաշարավոր: Գիտնականները վողնաշարավորներ են կոչում այն կենդանիներին, վորոնք վոսկորներից կմախք ունեն: Մարդը նույնպես կմախք ունի: Կմախքը մարմնի ամենակարևոր մասն ե: Կմախքը կանգուն ե պահում մարմինը: Վոչ բոլոր կենդանիները կմախք ունեն: Ինչպես ասված ե, ճիճուներն ու բզեզները վոսկորներ չունեն: Այն կենդանիները, վորոնք կմախք ունեն, արդեն այդ մեկ բանով ասես թե իրար ազգակիցներ են: Սակայն ազգականները մարդուն ել ազգակիցներ են: Սակայն ազգականները տարբեր են լինում, կան մոտավոր ազգականներ, կան նաև հեռավոր ազգականներ: Վողնաշարավորներն ել տարբեր են լինում, վոմանք ավելի շատ նման են մարդուն, մյուսներն՝ ավելի քիչ:

Վողնաշարավոր են համարում ձկներին, գորտերին, մողեսներին և մյուս սողուններին, ապա՝ թռչուններին, ամբակավոր կենդանիներին, գիշատիչ կենդանիներին և վերջապես կապիկներին: Այդ բոլորը վողնաշարավոր են: Նրանք բոլորն ել վողնաշար ունեն: Բայց վորքան քիչ նման են նրանք իրար: Իսկ նրանցից իր տեսքովն ու կառուցվածքովն ով ավելի մոտ ե մար-

դուն: Վոդնաշարավորների վոր տեսակները մարդու ամենամոտիկ նախնիքն են հանդիսանում: Ձկների, գորտերի, սողունների և թռչունների մասին խոսել չարժե: Նրանք արդեն չափազանց են տարբերվում մարդուց:

ԻՆՉ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱ ԿԱԹՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԻՋԵՎ

Մարդու հետ ավելի շատ նմանություններ ունեն կաթնասունները: Ինչպես գիտենք, գիտնականներն այն կենդանիներին են կաթնասուններ անվանում, վորոնք իրենց ձագերին կաթով են կերակրում: Ուրեմն կաթնասուն են համարվում շները, կատուները, ճագարները, ձիերը, կովերը, վոշխարները, խոզերը, փղերը և այլն: Այդ ինչպես բան է,—կասի մի վորեւս ընթերցող.—միթե կատուները և խոզերը վորեւս բանով նման են մարդկանց: Ավելի մանրամասնորեն քննենք այդ Բոլոր շները, կատուները և մյուս կաթնասունները իրենց ձագերին կաթով են կերակրում: Կինն ել նույնպես իր նորածին յերեխաներին կաթով է կերակրում: Նա ել պտուկներ ունի: Այս կողմից կաթնասուններն ավելի նման են մարդուն, քան թռչունները կամ սողունները:

Հիշենք այժմ, թե ինչպես են ձագեր ծնում թռչունները, ոձերը, գորտերը, ձկները: Թռչունները և ոձերը ձու յեն ածում, գորտերը և ձկները իկրա յեն դնում: Յեվ միայն կատուները, շները և մյուս բոլոր կաթնասուններն են հղիանալով կենդանի ձագեր ծնում: Մարդիկ ել նույնպես կենդանի յերախաներ են ծնում: Դարձյալ դուրս ե գալիս, վոր կաթնասուններն ավելի նման են մարդուն, քան մյուս կենդանիները:

Այժմ նայենք կաթնասունների վրա: Նրանցից ամեն մեկը —կատուն, շունը, կովը, կապիկը, մեկխոսքով բոլորը ականջներ ունեն: Ելի դուրս ե գալիս, վոր բոլորից ավելի կաթնասուններն են նման մարդուն:

Մարդը մազեր ունի: Ծիշտ ե, նրանք քիչ են: Ձկները, գորտերը, ոձերը մազ չունեն: Թռչուններն ունեն միայն աղվամազ և փետուրներ, բայց իսկական մաշ չունեն: Իսկ կաթնասունների մեծ մասը նույնպես մազեր ունեն: Կատուները, շները, այծերը, վոշ-

խարները և ուրիշ շատ կենդանիներ ծածկված են խիտ բրդով: Դարձյալ դուրս ե գալիս, վոր մարդն ավելի կաթնասուններին ե նման, քան մյուս կենդանիներին:

Կարելի յե դարձյալ շատ նմանությունների մասին պատմել: Վոր կան կաթնասունների և մարդու մեջ, բայց դրա համար տեղը չի բավականացնում: Ուստի, ելի միայն մեկ բանի մասին կասեմ:

Գիտնականները վաղուց ուզում եյին իմանալ, թե ի՞նչ տեսք ունի մարդու յերեխան, յերբ գտնվում ե դեռ մոր մարմնի մեջ (սաղմը): Հաճախ ե պատահել, վոր կանայք մեռել են մեկուց առաջ, հղիության զանազան ամիսներում: Այդպիսի հանգուցյալների փորը ճղում. բայց եյին անում և ուսումնասիրում մարդկային բեղմնավորումը: Ամեն մեկին, իհարկե, հայտնում մարդկային բեղմնավորումը կամ սաղմը աճում է: Յեվ ահա յերևաց, վոր հղիության առաջին ամսում մարդկային սաղմը դեռևս շատ փոքր ե, նրան գրեթե չի կամարդկային սաղմը դեռևս շատ փոքր ե, նրան գրեթե չի կարելի զանազանել խոզի, նապաստակի, կապիկի, յեղան,—մեկ խոսքով վորեւս կաթնասունի սաղմից: Այս բանումն ել նմանություն կա կաթնասունների միջև:

Յեվ շատ կարևոր նմանություն: Բանից դուրս ե գալիս, վոր մարդը պարծենալու բան չունի և յերևակալելու իրեն բնության թագավոր, ինչպես վոր նրա մասին ասված ե աստվածաշնչի մեջ: Չի կարելի ասել, վոր մարդը բոլորովին տարբերվում ե կենդանուց: Ընդհակառակը, հիմնականում մարդու կառուցվածքը շատ նման ե կենդանու կառուցվածքին: Իսկ իր զոյություն առաջին ամսում մոր մարմնի մեջ մարդու սաղմը գրեթե չի տարբերվում կապիկի, խոզի, շան, ճագարի սաղմերից: Թուրս ե գալիս, վոր մարդու և կաթնասունների միջև ավելի նմանություն կա, քան մարդու և մյուս կենդանիների միջև:

Կաթնասուններին կարելի յե մեր ազգականներ անվանել: Բայց ազգականները զանազան են լինում: Կաթնասունների մեջն ել մարդուն ավելի շատ նմանները կան և ավելի քիչ նմանները: Բոլոր կաթնասուններից մարդուն ավելի նման են, իհարկե, կապիկները:

ԻՆՉ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԿԱՊԻԿԸ ՄԱՐԴՈՒ ՀԵՏ

Մեր յերկրներում կապիկներ չկան: Նրանք ապրում են տաք յերկրներում: Բոլոր կապիկները հիանալի մագլցում են ծառերի վրա, նրանց մեծ մասն ապրում է խիտ անտառներում:

Կապիկներին հաճախ կարելի չէ տեսնել կենդանաբանական այգիներում, փոքրիկ նրանք շատ լավ են հարմարվում և իրենց փոսայուններով ու ծամածուլթյուններով շատ զվարճացնում են այցելուներին: Մեր Միուլթյան մեջ կապիկներ կան Մոսկվայի, Լենինգրադի և միքանի ուրիշ խոշոր քաղաքների կենդանաբանական այգիներում:

Գրեթե բոլոր կապիկներն իրենց ծավալով ավելի փոքր են մարդկանցից, իսկ ամենամանր տեսակներն իրենց հասակով նորածին յերեխայի չափ են և նույնիսկ ել ավելի փոքր: Նրանք շատ նման են մարդուն իրենց ամբողջ մարմնով: Նրանց գլուխը և փոսները իրենց կազմությամբ հիշեցնում են մարդու գլուխն ու փոսները: Կապիկների մեծամասնությունը յերկայն, դուրս ցցված դունչ չունի, ինչպես սոփորաբար ունեն մյուս գազանները: Կապիկի դունչը սոփորաբար կարճ է և նման մարդկային դեմքի:

Կապիկներն իրենց փոսների վրա յեղունգներ ունեն, այլ փոշ ճիւղաններ, ինչպես մյուս կաթնասունները: Վոշ փոք յեղունգներ չունի, բացի մարդուց և կապիկից: Կապիկները մեկ, հազվագյուտ դեպքերում յերկու ձագ են ծնում, ճիշտ այնպես, ինչպես մարդիկ: Կապիկների մեծ մասը 32 ատամ ունի, բոլորովին այնպես, ինչպես մարդը: Մյուս կաթնասունները դրանից կամ ավել կամ պակաս ատամներ ունեն: Կապիկի ականջը ավելի մարդու ականջն է հիշեցնում, քան մյուս կաթնասունների ականջները:

Դուրս է գալիս, վոր կապիկներն իրոք շատ բանով նման են մարդուն: Բայց, իհարկե, տարբերություններ ել կան: Կապիկների մարմինն ամբողջապես ծածկված է բրդով: Գրեթե բոլոր կապիկները չորս վոտքով են շրջում, բոլորովին այնպես, ինչպես շները և մյուս կաթնասունները:

Ուրիշ տարբերություններ ել կան կապիկների և մարդու միջև:

ՎՈՐ ԿԱՊԻԿՆԵՐՆ ԵՆ ՄԱՐԴԱՆՄԱՆ ԿՈՉՎՈՒՄ

Կապիկների մեջ միքանի տեսակներ կան, վորոնք մյուսներից ավելի յեն նման մարդուն: Նրանց հենց այդպես ել մարդանման կապիկներ անվանեցին: Նրանցից միքանիսն այնքան են նման մարդուն, վոր նրանց ընդունում եյին վորպես անտառային վայրենի մարդիկ:

Մադագասկարի կապիկների մեջ ամենահայտնի տեսակները շիմպանզե և գորիլլա տեսակներն են: Բոլոր մարդանման կապիկներն ապրում են տաք յերկրներում և լինում են խուլ անտառներում, հեռու մարդկային բնակությունից: Նրանցից միքանիսն իրենց մեծությունը մոտ են մարդուն, իսկ հասակավոր վորձ գորիլլան ամենաբարձրահասակ մարդուց պակաս չի: Նրա հասակը 2 մետրի յե հասնում:

ԻՆՉ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱ ՄԱՐԴԱՆՄԱՆ ԿԱՊԻԿՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՐԴՈՒ ՄԻՋԵՎ

Մարդանման կապիկներն ավելի յեն նման մարդկանց, քան մյուս կենդանիները: Այդ նմանությունն աչքի յե ընկնում հենց առաջին հայացքից:

Գորիլլան և շիմպանզեն հիշեցնում են մարդուն, բայց միայն մազոտ մարդուն: Ճիշտ է, նրանք ավելի պակաս են ծածկված մազերով, քան թե մյուս կապիկները: Մարդու նման՝ նրանց դեմքի վրա յե մազ չկա: Այդ կապիկների կրծքի վրա յե նույնպես մազ չկա:

Իսկ ամենագլխավոր նմանությունը մարդու հետ ուրիշ բանումն է: Մարդանման կապիկները կարող են տեղափոխվել հետի վոտքերով, այնպես, ինչպես մարդը: Ճիշտ է, նրանք դրժվարությամբ են շարժվում և շատ անճոռնի յեն ման գալիս: Մյուս բոլոր կենդանիները չորս վոտքով են ման գալիս: Միայն միքանի գազաններ, որինակ՝ արջերը, կարող են կանգնել հետին թաթերի վրա, բայց հետին թաթերով տեղափոխվել արջն անկարող է:

Մարդանման կապիկների գլխի կազմվածքն ու ձևը նույնպես շատ են հիշեցնում մարդկանց գլուխները:

Ովքեր մարդանման կապիկներ են տեսել կենդանաբանական այգու, կամ պատկերների վրա, իսկույն նրանց աչքին ընկնում ե, վոր այդ կապիկները պոչ չունեն: Այդ բանով ել նրանք ելի ավելի նման են մարդուն, քան մյուս կապիկները: Մարդանման կապիկների ձեռքերն իրենց կազմությամբ շատ նման են մարդկանց ձեռքերին, բայց նրանք ավելի յերկայն են: Գնալիս կապիկները հենվում են ձեռքերի վրա, ինչպես անթացուպի վրա: Կա դարձյալ մի կարևոր տարբերություն:

Մարդու ձեռքի բութ մասը շատ շարժուն ե: Բութ մասի ոգնությամբ մարդը կարող ե ամենազանազան առարկաներ վերցնել և բարդ ու նուրբ աշխատանքներ կատարել: Յեթե մարդու ձեռքերի մատներն այնպես կազմված լինեյին, ինչպես վոտքերի մատները, այդ դեպքում նա չեր կարող այնպես լավ աշխատել, ինչպես այժմ: Մարդանման կապիկների բութ մասն այնքան ել շարժուն չի և նրանք այնպես ճարպկորեն չեն բռնում, ինչպես վոր այդ անում ենք մենք:

Այնուամենայնիվ գերի ընկած մարդանման կապիկին կարելի յե սովորեցնել պատառաքաղով և դանակով ուտել, շոր հագնել, մանր իրեր վերցնել ձեռքով, մեկ խոսքով, շատ բան անել, ինչ վոր անում ե մարդը: Իհարկե, կապիկն այդ ամենը դժվարությամբ ե սովորում և այնքան ել լավ չի անում, ինչպես մարդիկ:

Կապիկները չեն հասկանում, թե ինչու յեն շոր հագնում և պատառաքաղով ուտում: Նրանք վարժվում են դանազան կատակներ անել միայն նրա համար, վոր Գրեկ պարզե նրանց համեզ կերակուր ե տրվում:

Ինչպես ե կազմված մարդանման կապիկների փորոտիքը: Նրանց ներսի կազմությունը նման ե արդյոք մարդու մարմնի կազմությանը: Այն զիտնականները, վորոնց վիճակվել ե կապիկների զիտներ բաց անել, հաստատեցին, վոր նրանց ներսի կառուցվածքը շատ նման ե մարդու ներսի կառուցվածքին: Նրանք միևնույն վոսկորներն ունեն, ինչ վոր մարդը, թեպետև չափերով տարբերվում են: Ուղեղը մարդու ուղեղն ե հիշեցնում: Միայն կապիկի ուղեղը մեծությամբ ավելի փոքր ե մարդու ուղեղից:

Դուրս ե գալիս, վոր մարդանման կապիկներն ավելի, քան մյուս կապիկները և ընդհանրապես ավելի, քան բոլոր կենդանիները նման են մարդուն:

ԻՆՉ ԿԵՐՊՈՎ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԵՍ ՀԱՄՈՋՎԵՑԻՆ ԹԵ ԱՐԵՆԱԿԻՑ ԱԶԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԿԱ ՄԱՐԴԱՆՑ ՅԵՎ ՄԱՐԴԱՆՄԱՆ ԿԱՊԻԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Մի ուրիշ հանգամանք ել կա, վորը վերջնականապես համոզում ե մեզ այն բանում, վոր մարդանման կապիկները մարդու մոտիկ ազգակիցներն են: Հենց այժմ յես կպատմեմ ձեզ վերջերքս արված մի գյուտի մասին: Վաղուց արդեն գիտեյին, վոր մի կենդանու արյունը մի ուրիշ կենդանու վրա ինչպես թույն ե ներգործում: Որինակ, յեթե կատվի արյան մեջ նապաստակի արյուն լցնենք, այդ ժամանակ կատուն չղաճգություններով կբռնվի և շուտով կսատկի: Միևնույն բանը կպատահի, յեթե ձիու արյան մեջ շան արյուն լցնենք: Այդպես ել մահաբեր ազդեցություն ե գործում մարդու վրա շան, նապաստակի կամ լիորեն ուրիշ կենդանու արյունը: Յեվ ընդհակառակը, մարդու արյունը թունավոր ե կենդանիների համար:

Սակայն մի կենդանու արյունը մյուսի համար վոչ միշտ վնասաբեր ե: Միևնույն ցեղի կենդանու արյունը անվնաս ե: Այսպես, որինակ, վոչխարի շունը վոչ մի վնաս չի կրի, յեթե նրա արյան մեջ վորսի շան արյուն լցնենք: Վնաս չկա նաև ազգակից կենդանիների արյունից: Յերբ, որինակ, շանը գայլի արյուն ներարկեցին, շունը անհիվանդագին կերպով տարավ այդ ոպերացիան: Այդպես ել ձիու համար անվնաս ե նրա մոտավոր ազգակցի—եշի արյունը:

Միբանի տարի առաջ սկսեցին այդպիսի փորձեր անել մարդու և կապիկի վրա: Յեվ ինչ դուրս յեկավ: Դուրս յեկավ, վոր մարդկային արյունը ինչպես թույն ե ներգործում բոլոր կապիկների վրա, բացի մարդանման կապիկներից: Գորիլլային, շիմպանզեյին և մյուս մարդանման կապիկներին մարդու արյունը չի վնասում, իսկ կզակապիկի և կապիկների մյուս տեսակների վրա նա ինչպես թույն ե ներգործում: Յեվ ընդհակառակը, բոլոր կապիկների արյունը, բացի մարդանմանների արյունից, նույնպես թունավոր ե մարդկանց համար, ինչպես բոլոր մյուս կենդանիների արյունը:



ИНСТИТУТ
ВОСТОЧЕДОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Դուրս ե գալիս, վոր մարդանման կապիկներն են մարդու ամենամոտիկ ազգակիցները: Վոչ միայն տեսքով և մարմնի ներսի կառուցվածքով են նրանք բոլոր կենդանիներից ավելի մոտիկ մարդուն: Յերևում ե, վոր այդ կապիկները ազգակից են մարդուն նաև արյունով:

ԿԵՆԴԱՆՆԵՐԻ ՎՈՐ ՏԵՍԱԿԻՑ ԱՌԱՋ ՅԵԿԱՆ ՄԱՐԴԻԿ

Իհարկե, մարդիկ առաջ յեկան այն կենդանիներից, վորոնք մյուսներից ավելի յեն նման մարդուն: Մենք արդեն գիտենք, վոր մարդկանց ամենամոտիկ կենդանիները կապիկներն են, իսկ կապիկներից—մարդանմանները: Մարդկանց նախնիքն ել մարդանման կապիկներն են յեղել, բայց, իհարկե, վոչ այժմյան կապիկները, այլ այն տեսակները, վորոնք ապրելիս են յեղել յերկրի վրա մարդու ծագումից առաջ: Իսկ վոր նրանք ավելի վաղ են յերևացել յերկրի վրա, քան մարդիկ, մենք գիտենք նրանից, վոր նրանց վոսկորները յերկրի ավելի խոր շերտերումն են գտնվել, քան մարդկային վոսկորները: Նշանակում ե, թե յեղել ե մի ժամանակ, յերբ մարդանման կապիկները արդեն գոյություն են ունեցել յերկրի վրա, իսկ մարդիկ դեռ չեն յեղել:

Յերբեմն լսում ես, թե մարդանման կապիկները վայրենացած մարդիկ են: Այդ բանը բոլորովին ճիշտ չէ: Քանի վոր մարդանման կապիկները մարդկանցից ավելի վաղ են յերևացել նրանք, իհարկե, չեն կարող վայրենացած մարդիկ լինել:

Զպետք ե կարծել, վոր կապիկների այն տեսակները, վորոնցից առաջին մարդիկն են ծագել, միևնույն կերպարանքն են ունեցել, ինչ վոր այժմյան մարդանման կապիկները: Ամեն ինչ յերկրի վրա փոխվում ե, փոխվում են մարդիկ, փոխվում են նաև կապիկները:

Այն կապիկները, վորոնք ապրելիս են յեղել հեռավոր անցյալում, շատ բանով տարբերվել են այժմյան գորիլլաներից կամ մյուս մարդանման կապիկներից: Այդ մասին մենք գիտենք յերկրի մեջը գտնված վոսկորների ուսումնասիրությունից հիման վրա: Սակայն չնայելով այդ տարբերություններին, հին կապիկների նմանությունը այժմյանների հետ այնքան մեծ ե, վոր յեթե մենք հանկարծ տեսնեյինք այդ կենդանիներին, առանց

վորեն տատանման կապիկների տեսակին կվերագրեյինք նրանց: Թե մեկը և թե մյուսները պատկանում են միևնույն տեսակին:

ՈՒՄԻՑ ԾԱԳԵՑԻՆ ԿԱՊԻԿՆԵՐԸ

Հաճախ հարցնում են՝ վորտեղից յերևան յեկան կապիկները: Իհարկե, կապիկներին վոչ վոք չստեղծեց: Կապիկներն առաջ յեկան ուրիշ կենդանիներից: Նրանց նախնիքը յեղել են կաթնասունների այն տեսակները, վորոնք մի փոքր հիշեցնում են վոզնիներին և խուլոզներին: Այժմ կաթնասունների այդ տեսակները չկան: Նրանք բոլորն ել մեռել, անհետացել են: Բայց պահպանված վոսկորներից գիտնականները վորոշեցին, վոր հենց այդ գաղաններն են յեղել կապիկների նախածնողները: Իսկ կաթնասուններն ումից են ծագել: Այդ հարցին ել գիտությունը պատասխան ե տալիս:

Կաթնասուններն առաջ են յեկել սողուններից: Դժվար ե պատկերացնել, վոր շատ հեռավոր անցյալում մեր նախնիքն յեղել են մողեսի նման կենդանիները: Մինչդեռ այդ այդպես ե: Սողունները յեղել են մեր նախնիքը հարյուրավոր միլիոն տարի առաջ: Հետո այդ մողեսներից միքանիսը դանդաղորեն փոփոխություն են յենթարկվել և վերջիվերջո դարձել են կապիկներ. իսկ հետո կապիկներն ել՝ աստիճանաբար փոփոխություն յենթարկվելով դարձան մարդիկ: Մարդիկ նույնպես շարունակ փոփոխվում են: Դժվար ե ասել, թե մեր հետնորդները ինչպիսի կերպարանք կունենան միլիոնավոր տարիներից հետո, պարզ ե միայն, ցոր վոչ այնպիսին, ինչպես այժմ: Անսովոր լինելու պատճառով, վորեն մեկի կարող ե դուր չգալ, վոր իր հեռավոր նախնիքը սողուններ են յեղել: Բայց ել ավելի զարմանալին այն ե, վոր մեր նախնիքը ձկներն են յեղել: Գիտությունն ապացուցեց, վոր բոլոր սողունները ծագում են ձկներից: Իսկ ձկներն, իրենց հերթին, առաջ յեկան ճիճուներից:

Իսկ թե ի՞նչպես յերկրի վրա կենդանի եյակներ յերևացին, այդ մասին կարելի յե կարդալ կենսաբանությունը—բիոլոգիային—նվիրված գրքույկում:

ՃԻՉՏ Ե ԱՐԴՅՈՒՄ, ՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ՓՈՓՈԽՎՈՒՄ ԵՆ

Ճիշտ ե արդյոք, վոր կենդանի եյակները փոփոխության են յենթարկվում: Վորեն մեկի կարող ե թվալ, վոր կենդանիները միշտ միակերպ են մնում: Մարդկանցից վոմանք կարծում են, վոր մեր շները, ձիերը, խոզերը միշտ այնպես են յեղել, ինչպես այժմ են: Դուրս ե գալիս, վոր այդ բոլորովին ճիշտ-չե: Կենդանիները սերունդե-սերունդ փոխվում են: Ճիշտ ե, այդ փոփոխությունը շատ դանդաղ ե կատարվում:

Ամենից ավելի լավ ե, վոր որինակով ապացուցենք այդ բանը: Հայտնի յե, վոր միքանի հազար տարի առաջ մարդիկ վոչ մի ընտանի կենդանի չունեյին: Չկային նույնիսկ ընտանի շներ, ել չխոսենք արդեն անասունների կամ թռչունների մասին: Այն ժամանակ յերկրի վրա գոյութիւն ունեյին միայն վայրենի յեղներ, վայրենի ձիեր, վայրենի խոզեր կամ վարազներ, վայրենի շներ: Հետագայում մարդիկ ընտելացրին միքանի վայրենի գազանների ե նրանց ընտանի դարձրին: Գերության մեջ այդ կենդանիների տեսքն սկսեց տարբերվել իրենց վայրենի նախնիներից, թեպետև եյականում պահպանեցին նմանությունը նրանց հետ:

Վերցնենք՝ որինակ, խոզին: Համեմատենք ընտանի խոզին ե վայրենի խոզին կամ վարազին իրար հետ: Ընտանի խոզի թե կաշին ուրիշ գույն ունի, թե խոզամազն ե ուրիշ տեսակ, դուռնչը մի փոքր ուրիշ կերպ ե կազմված, ականջներն ու ատամներն ավելի մանր են, քան վարազինը: Մեկ խոսքով, ամեն վոք հեշտությամբ կարող ե տարբերել ընտանի խոզին վայրենի խոզից: Այդպես ել կարելի յե տարբերել ընտանի կատվին վայրենի կատվից:

Դուրս ե գալիս, վոր կենդանիները փոխվում են: Չե՞ վոր ընտանի խոզերի նախնիքը սովորական վարազներ եյին: Իսկ այժմյան ընտանի խոզերը տարբերվում են վայրենի խոզերից: Ճիշտ ե, այդ տարբերությունները մեծ չեն: Թե ընտանի խոզը, թե վայրենի վարազը միևնույն տեսակի կենդանիներ են: Եյականում նրանք իրար նման են:

Բայց մարդն սկսեց ընտելացնել խոզերին սրանից

յոթ-ութ հազար տարի առաջ: Յոթ-ութ հազար տարվա ընթացքում կենդանիներն այնքան ել սաստիկ չեն փոխվում: Մարդանման կապիկները մարդիկ եյին դառնում միլիոնավոր տարիների ընթացքում: Յեվ այնուամենայնիվ շատ նմանություն մնաց կապիկի ե ամրդու միջև, ինչպես վոր մենք այդ մասին մի փոքր առաջ կարդացինք:

ՄԱՐԴԿԱՆՑ ՎՐԱ ՆՇԱՆՆԵՐ ԿԱՆ ԱՐԴՅՈՒՄ, ՎՈՐՈՒՄ ՑՈՒՅՑ ԵՆ ՏԱԼԻՍ, ԹԵ ՆՐԱՆՑ ՆԱԽՆԻՔԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ ՅԵՂԵԼ

Ասված ե, վոր նմանության գծեր կան յերեխաների ե ծնողների միջև, թոռների ե պապերի միջև, հետնորդների ե նախնիքների միջև: Պատահում ե, վոր միևնույն ցեղի մեջ շատ յերկար են դիմանում միևնույն նշանները: Որինակ՝ հայտնի բանատեղծ Պուշկինի նախնիքներից մեկը նեզը ե յեղել: Դրանով ե բացատրվում, վոր Պուշկինի դիմագծերը մի քիչ նեզրական դիմագծեր են հիշեցնում:

Հաճախ մարդու տեսքից միայն հեշտ ե լինում իմանալ, վոր նրա նախնիքների մեջ հրյաներ կամ հայեր են յեղել: Միբերում ռուսներից շատերը շիլ աչքեր ունեն: Այդ նշանակում ե, վոր նախնիքներից մեկնումեկը չինացի, տուսգուս ե յեղել կամ պատկանել ե մի վորեն ուրիշ շղթիկ ժողովրդի:

Մեկ խոսքով, հետնորդների մեջ պահպանվում են նախնիքների վորոշ գծերը:

Մարդիկ կենդանիների հետնորդներն են—սերունդը: Բայց մարդկանց վրա կա՞ն արդյոք այնպիսի նշաններ, վորոնցից յերևա, թե նրանց նախնիքը կենդանիներ են յեղել: Այո, այդպիսի նշաններ կան ե դրանք քիչ չեն:

Նրանցից մեկը գիտնականները գտան մարդու սաղմի մեջ, յերբ նա դեռ մոր արգանդումն ե գտնվում: Ուսումնասիրելով սաղմը հղիության առաջին ամսում, նրա պարանոցի վրա փոքրիկ փոսիկներ նկատեցին:

Հղիության յերկրորդ ամսում այդ փոսիկներն անհետանում են: Գիտնականները յերկար ժամանակ վարանման մեջ եյին, թե այդ փոսիկներն ինչի համար գոյութիւն ունեն: Յերևաց, վոր

նրանք այնպես են կազմված, ինչպես ձկները խոփկները: Ձկները խոփկների ոգնությամբ են շնչում: Մարդը թոքերով է շնչում և նրան խոփկներ պետք չեն: Այդ պատճառով մարդու այդ փոփկները շուտով անհետանում են: Փոսիկներից յերևում է, վոր մարդու նախնիքը ձկներ են յեղել և խոփկներով են շնչել: Այդ փոսիկները մնացին սաղմի վրա և միայն հիշեցնում են մարդու նախնիքների նախկին կյանքը:

Դուրս է գալիս, վոր մարդու նախնիքը իրոք վոր մի ժամանակ ձկներ են յեղել:

Նշաններ պահպանվե՞լ են արդյոք մարդկանց վրա, թե նրանց նախնիքը ուրիշ տեսակի կաթնասուններ են յեղել: Այո, պահպանվել են: Յեվ այդ տեսակ նշանները քիչ չեն: Որինակ՝ վերցնենք պոչը: Կաթնասունների մեծամասնությունը, կարելի չէ ասել՝ գրեթե բոլոր կաթնասունները պոչ ունեն: Մարդն ասես թե պոչ չունի: Սակայն մարդու սաղմը պոչ ունի: Ամենախսկական փոքրիկ պոչ: Այդ պոչիկը հիշողությունն է այն ժամանակի մասին, յերբ մարդու նախնիքը չորս վոտքով եյին վազում և պոչ եյին թափահարում: Հղության 3—4 ամսում սաղմի պոչն անհետանում է: Յերբ յերեխան աշխարհ է գալիս, նրա պոչի հետքն էլ չկա:

Սակայն, յերբեմն, թեպետև շատ հազվադեպ, յերեխաները փոքրիկ պոչով են ծնվում և այդ պոչը պահպանվում է ամբողջ կյանքի ընթացքում: Ժողովուրդը սովորաբար չի կարողանում բացատրել այդ տարրինակությունը և առասպելներ է ստեղծում այն մասին, վոր այդ յերեխայի ծննդյանը պիղծվողի յե մասնակցել: Մարդու պոչը սովորաբար մեծ չէ: Հազիվ է պատահում, վոր նա 5—6 սանտիմետրից ավելի յերկայն լինի: Դրա փոխարեն բոլոր մարդկանց վրա պոչի մի ուրիշ հետք է մնում—պոչուկի վոսկորը, վորով վերջանում է մեջքի վողնաշարը: Պոչի վոսկորը, ուրիշ խոսքով՝ պոչուկը, մարդու համար վոչ մի նշանակություն չունի: Սակայն կենդանիներին այդ վոսկորը պետք է—նրա վրա յե հենվում պոչը:

ԻՆՉԻ՞ ՄԱՍԻՆ Ե ՎԿԱՅՈՒՄ ԿՈՒՅՐ ԱՂԻՔԻ ԱՎԵԼՈՐԴ ՄԱՍԸ

Մարդն ունի մի բան ևս, վոր հիշեցնում է մարդու կենդանական նախնիքներին: Այդ՝ կույր աղիքի ճիճվանման ավելորդ մասն է: Ո՞վ չի լսել կույր աղիքի ավելորդ մասի բորբոքման մասին: Դա ծանր հիվանդություն է: Նրա բժշկության համար լուրջ ուշերացիա յե պահանջվում:

Մարդու ինչի՞ն է պետք կույր աղիքի ավելորդությունը: Բանն էլ հենց նրանումն է, վոր վոչնչի յել պետք չէ: Նրանից վոչ մի ուզում չկա: Թոքերը, ստամոքսը, լյարդը, փայծալը—դրանք բոլորն էլ ոգտակար և պետք են մարդուն: Իսկ կույր աղիքի ավելորդը մարդուն ամենևին պետք չէ: Վո՞րտեղից է վերցված այդ:

Բանից դուրս է գալիս, վոր կաթնասուններից շատերն ունեն կույր աղիքի ավելորդը: Այդ նրանց անհրաժեշտ է, վորովհետև ոգնում է մարսելիս, յերբ ստամոքսն ստիպված է բուսական կուպիտ կերակուր մարսել, ինչպես կեղևներ կամ տերևներ: Մարդն այդպիսի կերակուր չի ուտում: Ավելորդ մասը մարդու մեջ մնաց ժառանգաբար կենդանական նախնիքներից, վորոնք բուսական կուպիտ կերակրով եյին սնվում:

ՄԱՐԴԻԿ ՄԱՋՈՏ ԼԻՆՈՒՄ ԵՆ ԱՐԴՅՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ԳԱՋԱՆՆԵՐԸ

Այն լինում են: Յերբեմն, թեպետև հազվադեպ, մարդու ամբողջ մարմինը ծածկված է լինում խիտ մազերով: Այսպես, որինակ, Յեվտիխիյեվ ազգանունով մի ուսու մարդու ճակատի, այտերի, այտոսկրերի, մեկ խոսքով, ամբողջ դեմքի վրա խիտ աճեցին յերկայն մազեր:

Առաջներում այդպիսի մարդկանց շրջեցնում եյին բաղաբները և ցույց եյին տալիս ժողովրդին:

Այս դեպքերը հաստատում են, վոր մարդու նախնիքը կենդանիների նման ծածկված են յեղել բրդով:

Այժմ այդպիսի մազոտություն շատ քիչ է պատահում, վորպես այլանդակություն: Սակայն սաստիկ մազոտ մարդիկ, թեպետ վոչ այնքան այլանդակ, այժմ էլ հազվադեպ չեն:

ԼԻՆՈՒՄ ԵՆ ԱՐԴՅՈՒԲ ՇԱՏ ՊՏՈՒԿՆԵՐ ՈՒՆԵՅՈՂ ՄԱՐԴԻԿ

Յերբեմն պատահում են այնպիսի մարդիկ, վորոնց մարմնի վրա չորս, յերբեմն ել նաև ավելի պտուկներ կան: Այդ այլանդա-
կությունը նույնպես հիշեցում ե նախնիքների մասին: Չե՞ վոր
շունը, խոզը, մուկը և կաթնասուններից շատերը վոչ թե յերկու,
այլ ավելի պտուկներ ունեն: Այդ բանն ամեն մեկին հայտնի յե:
Շներին, կատուներին, խոզերին շատ պտուկներ են պետք նրա
համար, վոր նրանք միաժամանակ միքանի ձագեր են կերակրում:
Շատ պտուկներ ունեցող մարդիկը հիշեցնում են մեզ, թե ինչ-
պես են կազմված յեղել մեր նախնիքը:

Ինչպես տեսնում ենք, մարդկանց վրա շատ նշաններ կան,
վորոնք ապացուցում են, վոր մարդկանց հեռավոր նախնիքը
կենդանիներ են յեղել:

4. ԻՆՉԻ՞ ՄԱՍԻՆ ԵՆ ՎԿԱՅՈՒՄ ՀՆԱԳՈՒՅՆ ՄԱՐԴԿԱՆՑ ՎՈՍԿՈՐՆԵՐԻ ԳՅՈՒՏԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԻԿՆ ԱՐԴՅՈՒԲ ՆՄԱ՞Ն ԵՆ ՅԵՂԵԼ ԿԱՊԻԿՆԵՐԻՆ

Այն, առաջին մարդիկն ավելի նման են յեղել կապիկներին,
քան այժմյան մարդիկ:

Իհարկե, առաջին մարդկանց այժմ ապրողներինց վոչ վոք չի տե-
սել: Նրանց պատկերներն ել վոչ վոք չի նկարել: Բայց յերկրի
մեջը պահպանված այդ մարդկանց վոսկորներից գիտնականները
կարող են ճշտորեն վորոշել, թե ինչպիսի տեսք են ունեցել նրանք
ընդհանրապես:

Միքանի տեղերում յերկրի մի շերտում մարդկանց վոսկորներ
են գտել անհետացած շատ կենդանիների վոսկորների հետ միասին:
Վոսկորներից դատելով, այդ անհետացած կենդանիները տար-
բերվում են իրենց այժմյան հետնորդներից: Նույն բանը վերաբե-
րում ե նաև մարդկանց:

Գիտնականներն ուսումնասիրեցին ամենահին մարդկանց
վոսկորները: Յերևաց, վոր նրանք վոչ բոլորովին այնպիսի տեսք

են ունեցել, ինչպիսին ունեն այժմյան մարդիկ: Շատ բանով
նրանք հիշեցնում եյին մարդանման կապիկներին:

Ո՞Վ Ե ԿԱՊԿԱՄԱՐԴԸ

Գիտնականները հնադույն մարդկանցից միքանիսի վոսկորնե-
րը չե միայն, վոր գտան: Գիտնականներին հաջողվեց գտնել
նույնիսկ մի այնպիսի եյակի վոսկորները, վորին մարդ անվանել
ել չի կարելի, վորովհետե նա շատ նման ե կապիկի, կապիկ ել
անվանել նույնպես չի կարելի, վորովհետե նա մարդու չափա-
զանց շատ նշաններ ունի: Այդ եյակը գտնվում եր ասես թե
մարդկանց և մարդանման կապիկների մեջտեղում: Գիտնականնե-
րն ել նրան անվանեցին կապկամարդ:

Սրանից 40 տարի առաջ Դյուբուա ազգանունով մի հոլան-
դական բժիշկ պեղումներ կատարեց Ասիայի տաք յերկրներում
(Յավա կղզու վրա):

Բժիշկին հաջողվեց անհետացած կենդանիների շատ վոսկորներ
հանել պեղումով: Այդ վոսկորների հետ միասին յերկրի մի շեր-
տում պատահեցին միքանի վոսկորներ, նման մարդկային վոս-
կորների: Այդ վոսկորների մեջը կային մի գանգի մի մասը և
վոտքերի վոսկորներից մեկը: Գտնված վոսկորները Դյուբուան
ուսումնասիրում եր մոտավորապես յերեսուն տարի:

Յերևաց, վոր այն եյակը, վորին պատկանում եյին այդ
վոսկորները, շատ բանով նման եր կապիկի: Բայց նա մեծ նմա-
նություն ուներ նաև մարդու հետ: Այդ եյակին գիտնականները
անվանեցին կապկամարդ:

Կապկամարդը հասակով մի փոքր ցածր եր ժամանակակից
մարդուց: Նա կատաղի տեսք ուներ՝ նեղ, թեք ձակատ, դուրս
ընկած հոնքեր: Վոտքի վոսկորից յերևում ե, վոր կապկամարդը
շրջում եր յերկու, այլ վոչ թե բոլոր չորս վերջավորությունով:
Նա անճուռնի կերպով եր տեղից-տեղ շարժվում: Նրա վոտքերը
հարմարեցված չեյին արագ ման գալու:

Գանգից յերևում ե, վոր կապկամարդու ուղեղը ավելի
փոքր եր մարդու ուղեղից: Ուստի, կապկամարդը մտածելու
ընդունակություն ուներ, բայց մտքերը թույլ եր կապում իրար
հետ: Նա դեռ չեր կարողանում խոսել:

Մինչև վերջին ժամանակներս հայտնի էին միայն մեկ կապ-
կամարդու վոսկորներ: Բայց անցյալ տարի մի չինացի գիտնա-
կան Ջինաստանի մի վայրում կապկամարդու շատ վոսկորներ
գտավ: Այդ վոսկորները գտնվել են մի փուլ յեկած այրի մեջ:
Նրանց հետ միասին կրակի հետքեր գտնված էին: Գիտնականները
կարծում են, Վոր կապկամարդը դեռ չէր կարողացել կրակ ձեռք
բերել:

ԻՆՉՊԻՍԻ ՏԵՍԲ ՈՒՆԵՅԻՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՄԱՐԴԻԿԸ

Կապկամարդուն չի կարելի իսկական մարդ համարել:
Սակայն գիտնականներին հաջողվեց գտնել և հետազոտել իսկա-
կան հնագույն մարդկանց վոսկորները: Այդպիսի մարդկանց մի-
ջանի տեսակներ են գտնված: Այդ բոլոր տեսակները կապկա-
յին նշաններ ունեն և ավելի նման են մարդանման կապիկնե-
րին, քան թե այժմ ապրող մարդկանց:

Հնագույն մարդկանց ամենահայտնի տեսակը կոչված է
Նեանդերտալցիներ:

Սրանից 80 տարի առաջ Գերմանիայի այրերից մեկում
գտնվել են վոչ բոլորովին սովորական տեսակի մարդկային
վոսկորներ: Այդ այրը փորող բանվորները նույնիսկ չէին ըն-
դունում, Վոր դրանք մարդկային վոսկորներ են: Տեղական
ուսուցիչը վոսկորները ներկայացրեց գիտնականներին: Գիտնա-
կան պրոֆեսորներն ու բժիշկները սկզբում հազար ու մի յենթա-
դրությունների մեջ ընկան, թե այդ ի՞նչ վոսկորներ են: Վոմանք
ասում էին, Վոր վոսկորները հիվանդ մարդու յեն պատկա-
նում են վոսկորների վրա և փոփոխության յենթարկում ներգոր-
ծում են վոսկորների վրա և փոփոխության յենթարկում նրանց:
Ուրիշները վճռեցին, թե վոսկորները պատկանում են վորևե
վայրենի մարդու: Այդ գիտնականները հիշեցին, Վոր Նապոլեոնի
ժամանակներում Գերմանիայում ֆրանսացիների դեմ կռվում
էր ռուսական բանակը: Ռուսական բանակում այն ժամանակ
շատ կազակներ կային: Իսկ կազակներին գերմանացիները գրե-
թե վայրենիներ էին համարում: Այդպես ել վորոշեցին, Վոր
վոսկորները պատկանում էին ռուսական բանակի մի կազակի,
վոր սպանվել է արշավանքի ժամանակ: Գտնվեցին նաև այնպիսի-

ները, վորոնք ասում էին, թե վոսկորները պատկանում էին
մի մարդու, վորը ապրելիս է յեղել Գերմանիայում շատ հին
ժամանակներում, յերբ այդ յերկրում բնակվելիս են յեղել բո-
լորովին ուրիշ տեսակի մարդիկ, քան մեր որերի մարդիկն են:

Վերջին գիտնականների կարծիքը ուղիղ դուրս յեկավ:
Ավելի նոր հետազոտություններն ապացուցեցին, Վոր վոչ միայն
Գերմանիայում, այլև յերկրագնդի ուրիշ տեղերում մի ժամա-
նակ ապրելիս են յեղել այդպիսի մարդիկ: Ապրել են նրանք
նաև մեր ԽՍՀՄ-ում: Նրանց վոսկորները գտնվել են Ղրիմի
այրերից մեկում:

Գիտնականներն այդ մարդկանց նեանդերտալցիներ անունը
տվին, այն այրի անունով, վորի մեջ առաջին անգամ գտնվել
են նրանց մնացորդները: Այդ այրը գտնվում էր Նեանդեր-
տալյան հովտում, Գերմանիայում: Նեանդերտալյան հովի-
տը գտնվում է հայտնի ֆաբրիկ-գործարանային շրջանի
մոտերքում, Ռուրի ավազանում, վորտեղ այժմ դաժան պալ-
բար են մղում բանվորները շահագործող-կապիտալիստների
դեմ:

Նեանդերտալցիները յերկրի վրա շատ վաղուց էին ապրում:
Նրանք յերևացին սրանից միքանի հարյուր հազար տարի
առաջ:

Նեանդերտալցիները կամ նախնականները, ինչպես վոր
նրանց անվանում են յերբեմն, շատ բանով տարբերվում էին
այժմյան մարդկանցից: Ցածր ճակատը և խոշոր, դուրս ընկած
ծնոտները նրանց անասնական արտահայտություն էին տալիս:
Նախնականների ուղեղն այնպես լավ կազմված չէր, ինչպես ար-
դի մարդու ուղեղը: Հետևաբար, նեանդերտալցին մտավորապես
ավելի պակաս զարգացած էր, քան այժմյան մարդիկ: Հասակով
նա այժմյան կարճահասակ մարդկանց չափ էր: Նրա վոտները
միշտ մի փոքր ծալված էին, ինչպես մարդանման կապիկների
վոտները և նա արագ վազել չէր կարողանում:

Նեանդերտալցիները միայն վոտների կազմությամբ չէ վոր
նման էին մարդանման կապիկներին: Նրանց ծնոտները և
սրանց գլխի կազմվածքը նույնպես շատ լանով հիշեցնում էին
կապիկներին: Նրանք նաև կապկային ուրիշ նշաններ ունեյին:

Դուրս ե գալիս, վոր նախնականներն ավելի շատ կապկա-
ցին նշաններ ունեն, քան թե այժմյան մարդիկ: Իսկ կապկամար-
դը ել ավելի նման եր կապիկին: Կապկամարդը նախնական մար-
դուց ավելի վաղ եր ապրում յերկրի վրա:

Այդպես ել պետք ե լիներ: Քանի վոր մարդիկ առաջ են
յեկել կապիկների մի ժամանակ գոյութիւն ունեցած տեսակից,
ապա ուրեմն առաջին մարդիկը պետք ե վոր ավելի նման լինե-
ին նրանց, քան թե այժմյան մարդիկը: Մենք գիտենք, վոր մոտիկ
սերունդներն ավելի նման են իրենց նախնիքներին, քան հեռա-
վորները: Դուրս ե գալիս, վոր յերկրում գտնված վոսկորները
հաստատում են մարդու ծագումը կապիկից:

Մեկ խոսքով, գիտնականները ինչ կողմից ել վոր մոտենում
եյին, միշտ միևնույն յեզրակացութեանն եյին հանգում: Ինչպես
ել շուռ տաս, մարդիկ կապիկներից են ծագում, իսկ հին մար-
դանման կապիկները մարդկանց ամենամոտիկ նախնիքն են յե-
րկր:

5. ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԻՆՉՈՒ ԿԱՊԻԿՆԵՐԻՑ ԱՌԱՋ ՅԵՎԱՆ ՄԱՐԴԻԿ

ՄԱՐԴԻԿ ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋ ՅԵՎԱՆ ԿԱՊԻԿՆԵՐԻՑ

Մարդիկ միանգամից առաջ չեկան կապիկներից: Սկզբում
մարդանման կապիկներից ծնվում եյին կապիկների ուրիշ տեսակ-
ները: Հետո սրանցից սկսեցին ծնվել կապկամարդիկ: Հետո
կապկամարդկանցից սկսեցին ծնվել նախնական մարդիկ: Իսկ
նրանցից ծագեցին իսկական մարդիկ:

Այս ամենը կատարվում եր շատ յերկար ժամանակի ըն-
թացքում: Բնութիւնն մեջ այնպես չի լինում, վոր եզ կապիկից
մարդ ծնվի: Կապիկներից, իհարկե, կապիկներ եյին ծնվում:
Սակայն, այդ կապիկները չնչին չափով տարբերվում եյին իրենց
ծնողներից: Իսկ յերրորդ սերունդը դարձյալ մի քիչ տար-
բերվում եր իր ծնողներից: Միայն մոտավորապես հարյուրերորդ
սերնդի մեջ հետնորդները նկատելի չափով տարբերվում են
նախնիքներից: Հազարավոր սերունդներ եյին պետք, վորպեսզի
մարդանման կապիկներից կապկամարդիկ սերվեյին: Յեվ մյուս

հազար սերունդներից հետո կապկամարդկանցից սերվեցին
նախնականները: Հարյուրավոր սերունդներից հետո նախնական-
ներից սերվեցին իսկական մարդիկ: Իսկ ինչո՞ւ կապիկներն
սկսեցին վորպես մարդիկ վերածնվել: Ինչո՞ւ սկզբում կապիկնե-
րը մնում եյին կապիկներ, իսկ հետո սկսեցին վորպես մարդիկ
վերածնվել: Այն ել վոչ բոլոր կապիկներից մարդիկ սերվեցին:
Շատ կապիկներից շարունակեցին կապիկներ ծնվել և ծնվում
են մինչև որս:

Դուրս ե գալիս, վոր միայն մի քանի կապիկներից սերվե-
ցին մարդիկ: Իսկ մյուս կապիկները հենց այդպես ել կապիկ-
ներ մնացին և նրանցից կապիկների նոր տեսակներ սերվեցին:

Վորպեսզի բացատրենք, թե ինչո՞ւ մի քանի կապիկներից
սերվեցին մարդիկ, պատմենք, թե ինչից ընդհանրապես փոփո-
խութեան են յենթարկվում կենդանիները:

ԿԵՆՂԱՆԻՆԵՐՆ ԻՆՉՈՒ ՅԵՆ ՓՈՓՈԽՎՈՒՄ

Ըստ աստվածաշնչի՝ դուրս ե գալիս, վոր աշխարհն այժմ
գոյութիւն ունի այնպես, ինչպես վոր ստեղծեց նրան աստ-
ված: Բայց իսկապես այդ ճիշտ չէ: Մենք արդեն գիտենք,
վոր վոչ մի արարիչ - աստված չկա, վոր աշխարհը վեց
որում չի ստեղծվել: Յերկիրը և բոլոր ապրողները նրա
վրա կազմվել են աստիճանաբար յիշխարդավոր տարիների ըն-
թացքում: Այժմ ել բնութիւնն մեջ ամեն ինչ փոփոխվում ե:
Այնտեղ, վորտեղ ծով եր, այժմ ցամաք ե: Այնտեղ, վորտեղ ա-
ռաջին ժամանակներում ցամաք եր, այժմ խոր ծով ե: Բարձր
լեռները փոշիանում են: Կենդանիների շատ տեսակներ, վորոնք
մեծ քանակութեամբ են յեղել, ժամանակի ընթացքում անհե-
տացան: Մյուս տեսակները, վորոնք մնացին, սաստիկ փոխվեցին:

Գտնված վոսկորներից գիտնականները վորոշեցին, վոր ար-
ջերը, առյուծները, յեղջերուները և ուրիշ կենդանիներ առաջվա
ժամանակներում այնպես չեյին, ինչպես այժմ են: Մի քանի
կենդանիներ ավելի խոշոր եյին, մյուսներն ավելի մանր: Նրանց
գլուխները, ձեռքերը, վոտները մի փոքր ուրիշ տեսակ եյին
կազմված, քան այժմյաններին: Ել առաջ ամենևին գոյութիւն

Գիտնականներն ուշադրություն դարձրին այն բանի վրա, վոր ընտելացրած հյուսիսային յեղջերուների յեղջուրներն ավելի թույլ են, քան թե վայրենի յեղջերուների յեղջուրները: Այդ բանը հասկանալի յե մեզ: Ընտելացրած յեղջերուները պետք չունեն այնքան հոգալ իրենց պաշտպանության մասին, ինչպես վայրենի յեղջերուները: Յեվ ահա նրանց յեղջուրներն ավելի թույլ են դառնում:

Ինչից են առաջ գալիս այս բոլոր փոփոխությունները: Պարզ է, թե ինչից: Փոխվեցին կենսական պայմանները, վորոնց մեջ ապրում էին կենդանիները: Այդ միևնույն է, թե փոխվեց բնությունը կենդանիների շուրջը: Իսկ քանի վոր փոխվեց բնությունը, փոխվում են նաև կենդանիները: Կենդանիները հարմարվում են կյանքի նոր պայմաններին:

Մարդիկ փոխեցին կենդանիների կյանքի պայմանները, կենդանիներն ել սկսեցին փոխվել: Դուրս ե գալիս, վոր կենդանիներն սկսեցին փոխվել մարդկանց շնորհիվ: Այդ փոփոխությունները մեկ անգամից չեն կատարվում: Անցնում են հարյուրավոր, հազարավոր տարիներ, մինչև վոր կենդանիները նկատելի չափով փոխվում են: Առաջին ընտանի կենդանիները միանգամայն նման էին իրենց վայրենի ազգակիցներին: Յեվ միայն հանգիստ կյանքի շատ սերունդներից հետո, մարդու պաշտպանության տակ, ընտելացված կենդանիների տարբերությունները վայրենի ազգակիցներից և նախնիքներից նկատելի դարձան:

Յերբեմն փոփոխություններն ավելի արագ են կատարվում: Անասնապահները գիտեն, վոր յեթե պարարտանալու հակամետ յերկու խոզի իրար հետ զուգորդեն, այդ դեպքում յերբեմն սերունդն ավելի պարարտ է լինում, քան ծնողները: Այդ ճանապարհով ընտանի կենդանիների լավագույն տեսակներն են աճեցնում: Բայց դրա համար կարևոր են վոչ միայն լավ դաներ, այլև կյանքի լավ պայմաններ: Կենդանիներին պետք է լավ խնամեն և նրանց պետք է լավ սնունդ տան:

Մեկ խոսքով, յեթե փոխվում են կյանքի պայմանները, այդ դեպքում կենդանիներն ել փոխվում են: Փոխվում է բնությունը, փոխվում է նայեմք ամբողջ կենդանական աշխարհը:

ԻՆՉՈ՞Ւ ԿԱՊԻԿՆԵՐՆ ՍԿՍԵՑԻՆ ՄԱՐԴԻԿ ԴԱՌՆԱԼ

Մարդանման կապիկներն սկսեցին մարդիկ դառնալ այն պատճառով, վոր նրանց շուրջը բնությունն սկսեց փոխվել: Մարդանման կապիկներն անտառներումն էին ապրում: Բայց վորպեսզի անտառներն աճեն, անձրևների բավարար քանակություն պետք է: Չոր վայրերում անտառներ չեն աճում: Յերբ վոր միջանի տեղերում անձրևներն սկսեցին ավելի սակավ տեղալ, այնտեղ անտառներն սկսեցին ավելի վատ աճել և աստիճանաբար սկսեցին փոխվել միջանտառակների և տափաստանների: Ծառերի վրա ապրեցին անհնարին դարձավ: Կապիկներն ստիպվեցին աստիճանաբար քաշվել յերկրի վրա:

Վոչ բոլոր կապիկները կարողացան հարմարվել նոր պայմաններին: Նրանցից վոմանք գաղթեցին կամ վոչնչացան: Իսկ նրանք, վորոնք մնացին, պետք է փոխվեին:

Նրանց այժմ վիճակվեց շատ ման գալ: Առաջներում արդեն նրանք վարժվեցին տեղափոխվել հետին թաթերով: Այժմ տեղափոխության այդ ձևն առանձնապես հարմար յերևաց: Յերկու վոտքի վրա կանգնելով, կարելի յեր բաց վայրերում ընդարձակորեն դիտել շրջակայքը և ժամանակին նկատել վտանգավոր գիշատիչ գաղանի մոտենալը: Հայտնի յե, վոր կապկային վոտքերն ավելի հարմարեցված են մագլցելու, քան թե ման գալու համար: Վորպեսզի վոտքերն ավելի պիտանի լինեյին ման գալու համար, նրանք պետք է մի փոքր փոխվեին:

Բայց կյանքի շրջիկ ձևից միայն վոտքերը չփոխվեցին: Սկսեց փոփոխության յենթարկվել նաև ուղեղը: Չե վոր մեծ ուղեղով և ծանր գլխով հարմար չե մագլցել կամ չորեքթաթ թափառել: Գլուխը շարունակ պետք է դեպի ներքև խոնարհվի: Այդ պատճառով ել քանի դեռ կապիկները չորեքթաթ էին ման գալիս կամ մագլցում էին, նրանց ուղեղը չեր կարող դարձանալ և աճել: Իսկ յերբ մարդու կապկային նախնիքը յերկրաբնակ դարձան, այլ վոչ ծառաստանի բնակիչներ, յերբ նրանք սկսեցին յերկու վոտքով ման գալ, այդ դեպքում ուղեղը կարող եր սկսել մեծանալ: Գլուխն այժմ հենվում եր ամբողջ մարմնի վրա: Գլխի մեծ կշիռը տեղափոխությանը չեր խանգարում:

Մեր նախահոր ձեռքերն այժմ ազատվեցին: Չե վոր մագլց-

ցելու գրեթե հարկ չկար: Թե մեր նախածնողն ինչպես եր ոգտադործում ձեռքը, այդ մասին կասվի միջանի եջից հետո:

Դուրս ե գալիս, վոր մարդանման կապիկը աստիճանաբար սկսեց շարունակ ավելի ու ավելի նմանվել մարդուն: Այդ բանն, իհարկե, շատ դանդաղորեն եր տեղի ունենում: Անտառը դանդաղորեն բաց վայրի յեր փոխարկվում: Շատ հազարավոր տարիներով եր կատարվում փոփոխությունը այն տեղերի բունթյան մեջ: Յեվ շատ հազարավոր տարիներով աստիճանաբար փոխվում եյին մարդանման կապիկները: Յուրաքանչյուր նոր սերունդ ավելի յեր հարմարեցված կյանքի նոր պայմաններին. յուրաքանչյուր նոր սերունդ մի փոքր ավելի յեր հիշեցնում մարդկանց: Սակայն այս ամենը այնպես դանդաղ եր կատարվում, վոր յեթե մենք ապրեյինք այդ ժամանակ, իհարկե, չեյինք նկատի այդ փոփոխությունները: Մարդկային կարճատև կյանքի ընթացքում այդ փոփոխությունները նկատել չի կարելի: Յեթե վոր մենք ապրեյինք հարյուր հազարավոր տարիներ և յեթե մենք շատ լավ հիշողություն ունենայինք, այդ ժամանակ միայն մենք կկարողանայինք նկատել այդ փոփոխությունները:

Սակայն մարդու գլխավոր տարբերությունը կապիկից վորքերի և գլխի կազմվածքի մեջը չե: Գլխավոր տարբերությունն այն ե, վոր մարդը կարողանում ե աշխատանքի գործիչներ շինել, իսկ կապիկները, նույնիսկ ամենազարգացածները, այդ բանն անել չեն կարողանում: Մյուս կարևոր տարբերությունը խոսելու կարողության մեջն ե: Կապիկները խոսել չեն կարողանում: Ծիշտ ե, գիտությունն ապացուցեց, վոր առաջին մարդիկը նույնպես չեյին կարողանում խոսել: Նրանք նշաններով եյին բացատրվում:

Ուրեմն ինչպես պատահեց, վոր մեր նախնիքը գործիքներ շինել սովորեցին: Առաջին իրերը, վորոնցով ոգտվում եր մեր նախնին, ձեռնափայտն եր և քարը: Շատ կապիկներ դեպքը բերած ժամանակը նույնպես ոգտվում են փայտերից և քարերից: Փայտերով նրանք խփում են ծառերի բնին, վորպեսզի պտուղներ վայր գցեն: Կապիկները փայտեր ու քարեր են շարտում իրենց թշնամիների վրա:

Սակայն, վոչ միշտ կարելի յե հարմար փայտ գտնել: Սովորական կապիկների համար այդ բանը կարևոր չե, վորովհետև նրանք բավական քիչ դեպքերում են ոգտվում փայտերից: Իսկ մեր նախնիքների համար այդ կարևոր եր: Հարմար ձեռնափայտ ունենալու համար՝ պետք եր շինել այն: Ինչո՞վ շինել: Յերկաթե դանակներ չկային: Մեր նախնիքը սուր յեզերքներով քարեր եյին ընտրում գեանից և նրանցով ծառ եյին կտրում ճիշտ այնպես, ինչպես մենք կտրում ենք ծառը յերկաթե դանակով: Առաջին մարդիկը սուր քարերով եյին կտրում և կոկում ձեռնափայտերն ու դազանակները:

Ինչո՞ւ մեր նախնիքներին լավ շինված ձեռնափայտեր չե դազանակներ պետք յեկան: Չե՞ վոր կապիկներին վորեւե փայտ բավարարում եր: Բանն այն ե, վոր կյանքի պայմանները փոխվեցին: Քանի դեռ մեր նախնիքն անտառներումն եյին ապրում, նրանք լիովի բավարարվում եյին մրգերով և ուրիշ բուսական ուտելիքներով: Չե՞ վոր նրանք ապրում եյին տաք յերկրներում, վորտեղ ձյուն չկա և ծառերն ամբողջ տարին մշտականաչ են:

Իսկ յերբ անտառներն սկսեցին պակասել, յերբ բացատներ յերևացին, պտուղները քչացան: Պետք եր կենդանական կերակուրին անցնել: Սակայն, մեր կապիկանման նախնիքը վատ եյին հարմարեցված վորսորդության: Նրանք արագավազ վորքեր չուներին, վորպեսզի հետապնդեյին վորսին: Նրանք ուժեղ ժանիքներ չուներին, վորպեսզի պատառոտեյին կենդանիների միսը, ինչպես այդ անում են գայլերն ու արջերը: Նրանք ճիւղաններ չուներին: Ուրեմն ինչպես վորսային: Մեր նախնիքներին վիճակվեց ձեռնափայտեր և դազանակներ գործադրել: Նրանցով նրանք խփում եյին վորսին, հսկելով նրա վրա մի մեկուսի տեղում: Դազանակով, իհարկե, ավելի հեշտ ե սպանել գազանին, քան թե ձեռքով: Ձեռնափայտն ոգտակար յերևաց նաև ուրիշ բանի համար: Սրած ձեռնափայտով հարմար եր քանդել բները և սպանել դանազան մանր կենդանիների: Առաջին մարդիկը չեյին զգվում վոչ մի ուտելիքից և ուտում եյին ամեն պատահած ուտելու բան: Բացի զրանից, սրածայր փայտով հեշտ ե փորելով հանել հողից ուտելիք, սրածայր փայտով հեշտ ե փորելով հանել հողից ուտելիք արմատներ և կոճղեգներ: Իբրև փայտ կամ դազանակ՝ նախնական

մարդիկ գործ եյին զնում հաճախ ծառերից պոկված ճյուղերը։ Սակայն ճյուղերը հաճախ անհարմար են լինում։ Նրանցով ավելի հաջող գործելու համար պետք է նրանց կտրտել։ Առաջին մարդիկը այդ աշխատանքը կատարում եյին սուր քարերով։

Առիւստանցիք և սարբերում մարդուն կենդանուց։ Այդ ասաց մեծ գիտնական և հեղափոխական, պրոլետարիատի ուսուցիչ Կարլ Մարքսը։ Յերբ մեր կապկային նախնին սկսեց գիտակցորեն շինել դադանակներ, նա սկսեց մարդ դառնալ։ Նա սկսեց աշխատել։ Մարդն աշխատում էր ձեռքերով։ Մեր նախնիքը ձեռքերով աշխատել կարողացան շնորհիվ այն բանի, վոր նրանք արդեն ել քառաթաթ չեյին թափառում։ Նրանց ձեռքերն ազատ եյին։ Մարդիկ կարող եյին նրանց ոգտագործել աշխատանքի համար։

Աշխատանքի շնորհիվ ձեռքերն սկսեցին կատարելագործվել, հետզհետե ավելի ու ավելի տարբերվելով կապիկների ձեռքերից։ Սակայն, միայն ձեռքերը չսկսեցին կատարելագործվել։ Մարդու ուղեղը նույնպես սկսեց մեծանալ և ավելի բարդանալ։ Չէ՞ վոր այժմ ուղեղն ավելի գործ ունեւ անելու։ Պետք էր մտքումը պահել աշխատանքի ձեւերը։ Պետք էր լինում խորհել աշխատանքի յեղանակների մասին։ Ուստի և ուղեղն սկսեց զարգանալ և բարելավվել։

Այսպես, մարդն սկսեց իսկական, իր ոգտի համար գիտակցորեն աշխատող մարդ դառնալ։ Առաջին մարդկանց կարելի է յե վայրենի մարդիկ անվանել։ Նրանք խոսել չեյին կարողանում։ Նրանք չեյին կարողանում կրակ ձեռք բերել։ Նրանք մերկ եյին ման գալիս։ Նրանք չեյին իմանում տուն շինել։

Բայց և այնպես դրանք մարդիկ եյին։ Նրանք կարողանում եյին կարեւոր գործիքներ շինել և ոգտվել նրանցից։ Նրանք կարողանում եյին խորհել և կշռադատել։ Նրանք վոչ միայն կարողանում եյին ընտրել պատրաստին, ալի ուտելիք ձեռք բերել աշխատանքի ոգնությամբ։ Այժմ ամենավայրենի գազանները նրանց համար սարսափելի չեյին։ Նրանց դեմ մարդիկ դենք ունեյին։ Իսկ յեթե դենքը բավական չեր լինում, այդ դեպքում խելքը միջոցներ եր թելադրում ազատվելու ամենասարսափելի թշնամիներից։

Այժմ մենք գիտենք, թե ինչպես պատահեց, վոր կապիկը մարդ դարձավ։ Բնության մեջ առաջ յեկած փոփոխությունները ստիպեցին մարդանման կապիկներից վոմանց հարմարվել կյանքի նոր պայմաններին։ Բնական նոր պարագայում կապիկներն իրենց փրկության համար պետք է սկսեյին գործիքներ շինել։ Առանց դրան նրանք կկորչեյին։ Ինչպես մենք գիտենք, նրանք չունեյին՝ վոչ ճիրաններ, վոչ յեղջուրներ, վոչ ուժեղ ատամներ։ Նրանք վաղել ել չեյին կարողանում։ Մեկ խոսքով, մեր նախնիքը պաշտպանվելու բան չունեյին։ Յեթե նրանք չկարողանային իրենց համար գենքեր գտնել, նրանք դժվարության մեջ կընկնեյին։

Բայց դենք և ուրիշ կարեւոր կահույք պատրաստելու համար պետք էր աշխատել։ Աշխատանքի շնորհիվ մարդն իսկական մարդ դարձավ։

Միայն աշխատանքի շնորհիվ է մարդկությունը առաջ շարժվում։ Աշխատանքը մարդկությանը հնարավորություն տվեց ավելի լավ պայքարելու բնության դեմ։ Մարդն այժմ բնությունն իրեն է յենթարկում, ստիպելով նրան ծառայել մարդկության։ Կենդանիներին, բույսերը, քարածուխը, տորֆը, կավը, յերկաթը, պղինձը, գազը, շոգին, ելեկտրականությունը, նույնիսկ չրի ուժը—այս ամենը մարդիկ կարողանում են հարմարեցնել իրենց։ Յուրաքանչյուր որ մենք նոր գյուտերի մասին բան ենք իմանում։

Ինչից սկսվեց արդյոք մարդկության կուլտուրական աշխատանքը։ Սկսվեց նա այն ժամանակից, յերբ մեր նախնիքը սովորեցին դադանակով գազան սպանել և յերբ նրանք սկսեցին այդ դադանակը կտրել սուր քարով։ Փայտե դադանակը և սուր քարը—դրանք մարդկության առաջին գործիքներն են։ Մարդիկ հենց վոր սովորեցին գործիքներ շինել, այդ ուղիով շարունակեցին առաջ գնալ։ Շատ հազարամյակների ընթացքում նրանք կատարելագործում եյին իրենց գործիքները, քանի դեռ չեյին սկսել շինել այնպիսի բարդ մեքենաներ, վորպիսիք կառքի յե տեսնել մեր ֆաբրիկաներում և գործարաններում։

ԿԱՊԻԿՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՐԴՅՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԾԻՆԵԼ

Հայտնի յե, վոր նույնիսկ մարդանման կապիկները գործիքներ չեն շինում: Վոչ գործիլանները, վոչ շիմպանզեն, վոչ ուրիշ մարդանման կապիկներ չունեն վոչ դազանակներ, վոչ սրածայր ձեռնափայտեր բույսարմատներ—արմտիք—փորելի—հանելու համար: Ծիշտ ե, վարժեցրած կապիկները կրկեսներում ամեն տեսակի ձեռնածուխյուններ—ֆոկուսներ—են ցույց տալիս, սակայն այդ ձեռնածուխյունները նրանք անում են վոչ իրենց ցանկությամբ և վոչ ել գիտակցորեն: Պատահում ե, վոր կապիկներին սովորեցնում են հաց կտրել, վառելափայտ ջարդել, նույնիսկ հեծանիվով զբոսնել: Սակայն, կապիկներն իրենք իրենց կամքով յերբեք հեծանիվով չեյին շրջի: Նրանք այդ անում են կրկեսում կամ նրա համար, վոր վախենում են վերակացուի ծեծերից, կամ նրա համար, վոր զանազան ոյիններ անելու համար նրանց մի բան են տալիս: Ուստի և մարդկանց մեծամասնութունը կարծում ե, վոր կապիկներն իրենք իրենց կամքով վոչ միայն գործիքներ չեն շինում, այլև չեն կարողանում թեկուզ պարզ գործիք պատրաստել:

Բայց այդ այնքան ել ճիշտ չե: Մի գերմանացի գիտնական, պրոֆեսոր Կելլերը, մի շարք փորձեր արեց մարդանման կապիկների վրա: Այդ փորձերը ցույց տվին, վոր մարդանման ամենաընդունակ կապիկները կարևոր դեպքում կարող են իրենց կամքով ամենապարզ գործիքներ շինել: Կելլերն այսպիսի փորձեր սարքեց: Մի կենդանաբանական այգում նրա տրամադրության տակ շիմպանզե տեսակի մարդանման կապիկները մի փորձիկ հոտ կար: Նրանցից նա ընտրեց ամենակորովամիտ վորձ կապիկին, վորին Սուլթան եյին կանչում: Սուլթանը ճարպկորեն կարողանում եր զանազան ոյիններ անել: Նա՝ մյուս կապիկների համեմատությամբ, շատ սրամիտ եր:

Այսպես, որինակ, մի անգամ պրոֆեսորը միրգ դրեց հատակի վրա, մոտիկ այն վանդակին, վորի մեջ նստած եր Սուլթանը: Միրգն այնպիսի հեռավորության վրա յեր դրված, վորպեսզի Սուլթանը չկարողանար ձեռքով վերցնել այն: Այնուամենայնիվ կապիկը խելք արեց ձեռք բերել այն: Նա միրգը փայտով հավաքեց:

Մի ուրիշ անգամ պրոֆեսորը միրգը բարձր կախեց վանդակի առաստաղից: Սուլթանը վեր-վեր թռավ, բայց մրգին հասնել չկարողացավ: Վանդակում թափված եյին փայտե շատ արկղներ: Այդ ժամանակ Սուլթանը մի արկղը մյուսի վրա դնելով, ցատկեց նրանց վրա և վերցրեց պտուղները:

Այդ ամենը Սուլթանն ինքն եր անում: Վոչ վոք նրան չեր սովորեցրել: Բայց այդ չեր, վոր հետաքրքրում եր պրոֆեսոր Կելլերին: Նա ուզում եր իմանալ, թե կապիկն ինքը կկարողանա արդյոք իր կամքով իրեն համար գործիք պատրաստել, թեկուզ ամենապարզ գործիք: Որինակ, կկարողանա արդյոք Սուլթանն ինքը իր կամքով իրեն համար փորեկ ձեռնափայտ հորինել, նրա համար, վորպեսզի միրգը ձեռք բերի:

Այդ բանն իմանալու համար Կելլերը մի անգամ Սուլթանին յերկու փայտ տվեց: Նրանցից մեկը կարելի յեր պղնդացնել մյուսի մեջ: Պրոֆեսորն այս անգամ միրգը մի փոքր հեռու դրեց, այնպես՝ վոր մեկ փայտով չեր կարելի վերցնել այն: Սուլթանն, ինչպես միշտ, սկսեց փորձել վերցնել միրգը: Ձեռքով վերցնել չհաջողվեց, փայտով՝ նույնպես չհաջողվեց: Սուլթանը պտույտ-պտույտ եր անում, հեռում եր, փորձում եր այս կամ այն կերպով հասնել մրգին, բայց բան չեր դուրս ելնում: Այդ ժամանակ Սուլթանը ձեռք քաշեց այդ բանից և սկսեց խաղալ փայտերով: Խաղի ժամանակ հանկարծ նրան հաջողվեց մեկ փայտը դնել մյուսի մեջ: Մեկ փայտը պինդ ամրացավ մյուսի մեջ: Ստացվեց մի յերկայն փայտ: Կապիկն իսկույն սլացավ դեպի վանդակը, կոխեց փայտը և սկսեց ձեռք գցել միրգը: Սկզբում նա ձեռք գցեց մեկ պտուղ: Ուրախությունը փայլում եր նրա դունչի վրա: Կապիկը նկատելի չափով գոհ եր իր սրամտությունից: Նա չսկսեց ուտել և աշխատեց ձեռք գցել մնացած միրգը: Յեւ այն ժամանակ միայն, յերբ բոլոր միրգը ձեռք գցեց, կապիկը կերավ այն բոլորը:

Այն ժամանակ Կելլերը նոր փորձի դիմեց: Նա դարձյալ յերկու փայտ տվեց Սուլթանին: Մեկի մեջը դատարկ եր: Բայց նրա մեջը մյուս փայտը դնել չեր կարելի, վորովհետև յերկրորդ փայտը չափազանց հաստ եր: Միրգը նա դրեց այնպես, ինչպես անցյալ անգամ: Պրոֆեսորին հետաքրքրում եր այն, թե Սուլ-

Թանը կկարողանա՝ արդյոք վորեւ բան մտածել միրզը ձեռք
գցելու համար: Յեւ Սուլթանը գլխի ընկավ: Սկզբում նա յեր-
կար ժամանակ պտտեցնում եր փայտերը և փորձում եր մեկը
մյուսի մեջը դնել: Բայց այդ չեւ հաջողվում: Այդ ժամանակ
կապիկն սկսեց կրծել ավելի բարակ փայտը: Նա այնքան կրծեց
այդ փայտը, մինչև վոր հաջողվեց դնել այն մյուսի մեջ: Այդ
հաջողությունից հետո Սուլթանը, ջափազանց գոհ, քաշեց միր-
զը և հաճույքով նախաճաշեց նրանով:

Պրոֆեսոր Կելլերի փորձերն ինչ են ցույց տալիս: Նրանք
ցույց են տալիս, վոր կապիկը կարող է իրեն համար գործիք-
ներ շինել: Ճիշտ է, նա չի կարողանում ոգտվել այս ու այն
ինստրումենտներից՝ գործիք պատրաստելու համար: Կապիկն
ընդունակ չե ինքը գլխի ընկնելու, վոր մի սուր քար ջոկելով,
ինքը կարող է փայտ շինել իր ճաշակով: Գործիք շինելու համար
կապիկն ոգտվում է իր սեփական ատամներից:

Սակայն Սուլթանն աշխատում եր իր կամքով և գիտակցորեն:
Նա ինքը գլխի ընկավ կրծել փայտը: Նա կշռադատեց, թե
ինչքան պետք է կրծել փայտը և հասկանում եր, թե ինչի յե
պետք այդ:

Դուրս է գալիս, վոր չի կարելի կենդանուն անջատել
մարդուց: Շիմպանզե ցեղից սերված մեր կապիկը գիտակե-
ցորեն եր շինում փայտը: Ճիշտ է, նա իր ձեռով եր աշխատում:
Մեր հայացքով, նա աշխատում եր շատ անձոռնի և անճար
կերպով: Բայց ելի յերևում է, վոր վոչ միայն մարդը, այլև
կապիկը վորոշ պայմաններում ընդունակ է գիտակցական
աշխատանքի:

Ձի կարելի հավատալ այն բանին, ինչ վոր գրված է
աստվածաշնչի մեջ, իբր թե մարդը բոլոր կենդանիների թագավորն
է: Մենք արդեն վաղուց կարդացել ենք, վոր մարդու մարմնի
կառուցվածքում շատ բան կենդանիներին է հիշեցնում: Իսկ
այժմ մենք գիտենք, վոր աշխատանքի ընդունակություն եւ
ունեն կենդանիները: Իհարկե, այդ ընդունակությունը վոչ
բոլոր կենդանիներն ունեն,—այդ ընդունակությունը միայն
ամենազարգացածներն ունեն: Բայց և նրանց մեջն եւ, ինչպես՝
որինակ, մեր շիմպանզեյի մեջ, այդ ընդունակությունը նոր է
սաղմնավորվում:

Կապիկի աշխատանքը, յերբ նա կրծում է փայտը իր կարիքի
համար, միայն սաղմնավորվող աշխատանք է:

Կենդանիները, և առաջին հերթին մարդանման կապիկները,
մարդու ազգակիցներն են: Յերբեմն մարդանման կապիկներին
անվանում են մեր փոքր յեղբայրներ: Ավելի ճիշտ կլի-
նի ասել, վոր նրանք մարդկանց ավագ, հետամնաց յեղ-
բայրներն են: Կապիկների մեջ արդեն սաղմնային վիճա-
կում կան այն հատկությունները, վոր ունի մարդը: Կապիկ-
ների մի մասում զարգացան աշխատանքային ունակությունները:
Նրանցից սերվեցին մարդիկ: Իսկ մի մասը մնացին այնպիսի կա-
պիկներ, ինչպիսիք վոր ելին առաջներում: Իհարկե, այդ բանում
կապիկները մեղավոր չեն: Ձի կարելի ասել, վոր նրանք անըն-
դունակ յերևացին: Բանն ուրիշ է: Բանն այն է, վոր նրանք կա-
րիք չեն ունեցել փոփոխության յենթարկվելու: Իսկ այնտեղ,
վորտեղ ապրում ելին այն կապիկները, վորոնցից մարդիկ սեր-
վեցին, բնական պայմանները փոխվեցին: Ուստի այդ կապիկ-
ներն եւ սկսեցին զարգանալ: Այլապես նրանք չեյին կարողանա
գոյություն ունենալ յերկրի վրա և կանհետանային:

Իսկ ինչո՞ւ կապիկներից միմանք պետք չունեյին կատարելա-
գործվելու և զարգանալու: Ահա թե ինչու: Տաք յերկրների այն
անտառներում, վորտեղ նրանք ելին ապրում, բավական ուռե-
լիք կար: Թշնամիներից թագնվել միշտ կարող ելին նրանք ծա-
ռերի ճյուղերի վրա: Չկային այնպիսի պատճառներ, վորոնք
ստիպեյին նրանց փոխվել:

Ինչպես մենք իմացանք, մարդը նրանով է տարբերվում
կենդանիներից, վոր գործիքներ է շինում և գիտակցաբար է
շինում նրանց: Բայց շիմպանզե Սուլթանն եւ գործիք շինեց,
թեպետ և շատ պարզ և շինեց այն գիտակցաբար: Միքանի ըն-
թեքցողներ կարող են հարցնել՝ ուրեմն շիմպանզե Սուլթանը
մարդ զարձակ: Իհարկե, վոչ: Սուլթանին և նրա
նման շիմպանզեներին կարելի չե անվանել մարդիկ՝
սաղմնային վիճակում, բայց նրանք իսկական մարդիկ չեն:
Իսկական մարդիկ չեն նրանք ահա թե ինչու: Նախ և
առաջ՝ շիմպանզեների մեծ մասը ամենևին չի կարողանում
գործիքներ շինել, իսկ բոլոր մարդիկ ընդունակ են այդ բանին:
Միայն շատ քիչ կապիկներ կարողանում են գործիքներ շինել:

Յերկրորդ՝ կապիկները սովորաբար գործիքներ չեն շինում։ Նրանք այդ բանի կարիքը չունեն։ Միայն առանձին, մարդկանց ստեղծած պայմաններում, գերության մեջ, նրանցից փոմանք գործիքներ շինելու ընդունակութուններ են հայտնաբերում։ Իսկ մարդկանց համար աշխատանքը սովորական պարագայում է։

Յերկրորդ՝ կապիկները վատ են պահում իրենց մաքրելով ձեռք բերված աշխատանքային ունակութունները։ Նրանց հիշողութունը թույլ է։ Մի փոքր ժամանակից հետո նրանք նորից ստիպված են գլխի ընկնել, թե ինչպիսի աշխատանք պետք է կատարեն, փորպեսզի իրենց նպատակին հասնեն։

Դուրս ե գալիս, փոր կապիկները մարդիկ չեն։ Նրանք միայն մարդկային տվյալներ ունեն։ Այդ տվյալները միլիոնավոր տարիների ընթացքում կապիկների զանազան տեսակների մեջ միակերպ չեյին դարգանում։

Յերբ սկսեցին փոփոխվել նրանց կյանքի պայմանները, նոր պայմանների ազդեցությամբ տակ մեր կապիկային նախնիքների մեջ զորացան և զարգացան այն ընդունակութունները, փորոնք նրանց մարդ դարձրին։ Իսկ կապիկների այն տեսակները, փորոնք ապրում էին հին, սովորական պայմաններում, թեպետև նույնպես աստիճանաբար փոխվում էին, բայց մարդկային ընդունակութուններ ձեռք չբերին։ Նրանք դարձան այժմյան մարդանման կապիկներ։

ՄԱՐԴԻԿ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՐԴՅՈՒ ԸՅՆՊԵՍ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ԿԱՊԻԿՆԵՐԻՆ, ՎՈՐՊԵՍՁԻ ՆՐԱՆԲ ՄԱՐԴԻԿ ԴԱՌՆԱՆ

Վոչ, այդ բանը չի կարելի անել։ Դրա համար պետք է դաստիարակել կապիկներին սերնդե-սերունդ շատ դարերի ընթացքում։ Բայց և այն ժամանակ ել դժվար թե բան դուրս գար։ Պետք է, փոր կենդանին ինքը հարգարի իր կյանքը, ինքը իրեն համար ուտելիք ձեռք բերի, ինքը պաշարի իրեն համար։ Իսկ գերության մեջ այդ ամենը չկա։ Կենդանիների մասին մարդիկ են հոգում։ Այդպիսի վիճակի մեջ կապիկները չեյին սկսի կատարելագործվել, այլ, ընդհակառակը, նրանք կսկսեյին բթանալ, ինչպես բթանում են կովերը, փոխաբաները և ուրիշ շատ ընտանի կենդանիներ։ Վոչ մի մարդ նրանցից չեր դուրս գա և նրանց մարդկային տվյալները պետք է խեղդվեյին։

Պետք է դարձյալ ավելացնել, փոր մարդանման կապիկները վատ են բազմանում գերության մեջ։ Այդ պատճառով սերնդե-սերունդ պահել նրանց գերության մեջ գրեթե անհնարին է։

6. ԻՆՉ ՏԵՍԲ ՈՒՆԵՅԻՆ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ՀՆԱԴԱՐՅԱՆ ՄԱՐԴԻԿ

ԻՆՉ ՏԵՍԲ ՈՒՆԵՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԻԿ

Ցարական ժամանակներում վանքերում և յեկեղեցիներում քիչ չեյին վաճառում այնպիսի պատկերներ, փորոնք ներկայացնում էյին Ադամին և Յեվային դրախտում։ Դեռ այժմ ել կարելի չե հանդիպել այդպիսի պատկերների հավատացյալ գյուղացիների և բանվորների տներում։ Պատկերների վրա նկարված են ծառեր, իսկ նրանց հետևում՝ մի մերկ տղամարդ և մերկ կին։ Մակագրութունից յերևում է, փոր հենց այդ մերկ մարդիկ Ադամն ու Յեվան են։ Այդ Ադամն ու Յեվան փոչ մի բանով չեն տարբերվում այժմյան սովորական մարդկանցից։ Նրանց դեմքը, մազերը, ձեռքերը, փոքերը, ամբողջ մարմինը նույնն են, ինչ փոր ԽՍՀՄ փորեք քաղաքացու։

Մենք այժմ գիտենք արդեն, փոր փոչ մի Ադամ ու Յեվա չեն յեղել, փոր այդ ամենը տերտերական հեքիաթներ են։ Մենք գիտենք, թե ինչպիսի տեսք ունեյին նախնական մարդիկ։ Կանգնել և ուղիղ ման գալ, ինչպես մենք՝ ձեզ հետ միասին, առաջին մարդիկ դեռ չեյին կարողանում։

Մեր նախնիքը տեղափոխվում էյին մի փոքր կուսած դիրքով, ծալված փոքերով։ Նրանց տեղափոխության ձևը միայն մի փոքր ավելի լավ եր գործիքների և մյուս մարդանման կապիկների քայլվածքից։ Դեմքով ել հնագույն մարդիկ սաստիկ տարբերվում էյին այժմյան մարդկանցից։ Նրանց ճակատը ցածր եր, դեպի հետ թեքված, դեմքի ստորին մասը սաստիկ դուրս եր ընկնում, նրանց ծնոտները խոշոր էյին, աչքերը մեծ, խորանիստ։ Դեմքը կատաղի, անասնական տեսք ունեք։ Հավանորեն, մեր նախնիքը սաստիկ մազոտ էյին։

Մեկ խոսքով, դուրս ե գալիս, փոր յեթե իրոք առաջին

մարդիկ ստեղծված լինելին ըստ պատկերի և նմանութան աստծու, ինչպես վոր գրված է այդ մասին աստվածաշնչի մեջ, ապա ուրեմն աստված շատ տգեղ տեսք պետք է ունենար, մի փոքր ավելի բարեվայելուչ մեծ կապի տեսքից:

ՎՈՐՏԵՂ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԻԿՆ՝ ԸՍՏ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ

Ըստ աստվածաշնչի՝ առաջին մարդիկ դրախտումն էին ապրում: Դրախտը նկարագրվում է, վորպես մի հրաշալի պարտեզ զարմանալի ծառերով: Այդ ծառերի վրա առատորեն աճում էին զանազան պտուղներ, վորոնցով և սնվում էին Ադամն ու Յեվան: Հարկ անգամ չկա ասելու, վոր վնչ բարու և չարի ծառ, վնչ կյանքի ծառ, վորոնց մասին պատմում է աստվածաշունչը, գոյություն չունի յերկրի վրա և յերբեք ել գոյություն չի ունեցել: Նույն ինքը դրախտն ել չկա և յերբեք ել չի յեղել: Դրախտը հորինել է նա, ով վոր աստվածաշնչական ծննդոց գիրքն է գրել, վորի մեջ նկարագրվում են այդ բոլոր հրաշալիքները: Վոր այդ այդպես է, շատ հեշտ է ստուգել: Ի թիվս այն գետերի, վորոնք բղխում են դրախտից, հիշվում է Յեփրատը: Այդ գետն այժմ ել այդպես է կոչվում: Նրա ափերում իրոք վոր շատ լավ տեղեր կան, սակայն վոչ մի դրախտ չկա այնտեղ և նրա հետքերն անգամ հայտնաբերված չեն:

ՈՒՐԵՄՆ ՎՈՐՏԵՂ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ԻՍՎԱՊԵՍ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԻԿ

Նրանք ապրում էին յերկրագնդի տաք յերկրներում, ճիշտ այնպես, ինչպես նրանց ամենամոտիկ նախնիքը—կապիկները—նույնպես ապրում են տաք յերկրներում: Նրանք, ովքեր լսել են, վոր հնագույն մարդկանց մնացորդներ են գտնված Գերմանիայում և Անգլիայում, կարող են այդ բանին չհավատալ: Չէ վոր մեր ժամանակում Գերմանիան և Անգլիան տաք յերկրներ անվանել չի կարելի: Նրանցում ձմեռը բավական ցուրտ է լինում և ձյուն է գալիս: Սակայն, սրանից հարյուր հազարավոր տարիներ առաջ, յերբ առաջին մարդիկն էին ապրում, յերկիրն այնպես չեր, ինչպես այժմ: Այն տեղերում, վորտեղ զով ե և ձյուն է գալիս, այն ժամանակներում աճում էին մշտականաչ ծառեր, սառնա-

մանիքներ ել չկային: Յեվ ընդհակառակը՝ տեղ-տեղ այժմյան տաք յերկրներում այն ժամանակ ցուրտ եր լինում:

Այն ժամանակ շոգ եր լինում այժմյան Փրանսիայում և Անգլիայում և այն դեռերում, վորոնց ափերին նախնական մարդիկն էին թափառում, ապրում էին ահապին ձիագետիներ (բեզեմոտ) և ուրիշ գազաններ, վորոնք ցրտեր և սառնամանիքներ չեն տանում:

Բացի Գերմանիայից և Անգլիայից նախնական մարդկանց մնացորդներ գտնված են նաև ուրիշ յերկրներում, որինակ՝ Ասիայում և Աֆրիկայում: Մեր ԽՍՀՄ-ում նրանց վոսկորները հայտնաբերվել են Ղրիմում:

Բանից դուրս է գալիս, վոր նախնական մարդիկն ապրել են յերկրագնդի բազմաթիվ վայրերում, այլ վոչ ամենևին մի պարտեզում, ինչպես վոր գրված է աստվածաշնչի մեջ:

ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԻԿԸ ՀԱԳՈՒՍՑԻ ՑԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔ ԶԳՈՒՄ ԵՅԻՆ ԱՐԴՅՈՒՔ

Առաջին մարդիկ չգիտեին հագուստն ինչ է և տներ ել չէին շինում: Տաք յերկրներում այդ բաների կարիքը չեր զգացվում, գիշերն ել յեթե ցուրտ եր լինում, նրանք իրենց համար ճյուղերից փոքրիկ դազաններ էին հյուսում, կամ բարձրանում էին այրերը, ինչպես վոր անում են շատ կենդանիներ:

Աստվածաշունչը պատմում է, վոր Ադամի և Յեվայի մեղադրությունից հետո նրանք մերկ շրջելուց ամաչել սկսեցին և իրենց համար տերևներից հագուստներ կարեցին՝ ազդրերը ծածկելու համար: Ըստ մեզ իհարկե, ամոթ է, անվայել մորեմերկ փողոց դուրս գալ: Սակայն, վոչ բոլոր մարդիկն այդպես են մտածում: Նույնիսկ մեր ժամանակում շոգ յերկրներին սակավ կուլտուրական ժողովուրդներից շատերը առանց հագուստի յեն շրջում: Այդ մարդիկն ամենևին չեն ամաչում իրենց մերկությունից: Յեթե նրանք վորևե գոգնոց են կապում կամ պատմուճան (պլաշ) հագնում, այդ բանն ամենևին ամաչելուց չեն անում, այլ նրա համար վորպեսզի նախապաշտպանեն մարմ-

նի ավելի զգայուն մասերը փաստելուց կամ պաշտպանեն իրենց ցրտից:

Այդպես ել մեր նախնիքը չունեյին և վոչ մի հազուստ: Յեթե ավելի ցուրտ եր լինում, նրանք սկսում էյին հարմարվել նոր պայմաններին և իրենց մարմինը մորթիներով էյին փաթաթում: Մորթիներից հազուստ պատրաստելը մարդիկ իրենք հնարեցին իրենց համար:

Ճիշտ է, աստվածաշնչում՝ գրված է, վոր աստված, մարդկանց գուրս վնդեցով զրախտից, մարդկանց համար կաշվե շորեր կարեց, գուցե թե ձանձրույթից դերձակությամբ զբաղվելով: Բայց այդ պատմվածքի վրա միայն ծիծաղել կարելի չէ:

ԻՆՉՈ՞Վ ԵՅԻՆ ՍՆՎՈՒՄ ՀՆԱԳՈՒՅՆ ՄԱՐԴԻԿ

Ըստ աստվածաշնչի՝ գուրս է գալիս, վոր Ադամն ու Յեփան միայն ծառապողներով էյին սնվում: Միայն յերբ հասունացավ նրանց վորդի Աբելը և սկսեց փոխարներ արածեցնել, նրանք սկսեցին մսով սնվել: Բայց այդ հեքիաթ է, վորի մեջ մի հատիկի չափ անգամ ճշմարտություն չկա: Առաջին մարդիկ են սկզբից սնվում էյին վոչ միայն բուսական, այլև կենդանական ուտելիքներով: Այն տեղերում, վորտեղ ապրում էյին նախնական մարդիկ, կենդանիների բազմաթիվ փոսկորներ են գտնում, վորոնց կերել են նրանք: Հաճախ պատահում են ջարդված փոսկորներ: Նախնական մարդիկ նրա համար էյին ջարդում փոսկորները, վորպեսզի նրանց միջից հանեն սննդավետ փոսկրուղեղը:

Սկզբներում մարդիկ առավելապես մանր կենդանիներ և լեշ էյին ուտում, իսկ հետագայում, յերբ կատարելագործվում էյին վորսի միջոցները, սկսեցին սնվել նաև ավելի խոշոր գազաններով:

Սկզբնապես մարդիկ ամեն ինչ հում էյին ուտում: Նրանք ուտում էյին հում միս և հում պտուղներ ու բույսաբուսականներ: Միայն ավելի ուշ ժամանակներում մարդիկ գտան կրակ ստանալու յեղանակը: Այդ գյուտը շատ կարևոր հետևանքներ ունեցավ: Կրակի ոգնությունը կարելի չէր խորովել ուտելիքը, վորի շնորհիվ նա ավելի համեղ և ավելի սննդավետ եր դառնում:

ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԱՇԽԱՏՈՒՄ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐԴԻԿ

Աստվածաշնչի Ադամը զրախտում փոխիչ չէր անում: Կերակուրը, կարելի չէ ասել, ինքն եր գնում նրա բերանը: Բայց Ադամն իրոք ախր յերբեք գոյություն չի ունեցել, իսկ հեքիաթում ամեն ինչ լինում է: Այն գրողը, վորը հնարել է Ադամին, ինքը չի սիրել աշխատել, ուստի և Ադամին պատկերացրել է զրախտում մի այնպիսի պարապ-սարապ ավարա, ինչպիսին ինքն է յեղել:

Ինչպես ասված է, աշխատանքն է տարբերում մարդկանց կենդանիներից: Աշխատանքի շնորհիվ է, վոր մարդիկ կարողացան հասնել այնպիսի բարձր տեխնիկայի, վորը մենք տեսնում ենք այժմ: Բայց աշխատանքի համար անհրաժեշտ են գործիքներ ու ինստրումենտներ, վորոնց ոգնությունը է կատարվում աշխատանքը: Իսկ ինչպիսի ինստրումենտներով էյին աշխատում նախնական մարդիկ: Ինչպես էյին նրանք կտրում ու կերտում դազանակներ և ձեռնափայտեր, վորոնք իրենց պետք էյին վորսի և պտուղներ ու արմուխներ հավաքելու համար: Մետաղյա ինստրումենտները նրանց անծանոթ էյին: Յերկաթ կամ պղինձ կուտելը նրանք շատ ավելի ուշ սովորեցին: Երկրագործությունից կամ անասնապահությունից ել ավելի ուշ:

Նախնական մարդիկ փայտը քարե ինստրումենտներով էյին պատրաստում: Սկզբներում նրանք գործ էյին անում պատահականորեն ձեռք ընկած սուր յեղերքներով քարի բեկորներ: Առանձնապես այդպիսի բեկորներ շատ են պատահում այն տեղերում, վորտեղ յերկրի մակերևույթի վրա ընկած են գայլախաղի—կայծքարի—շերտեր: Գայլախաղը բնականորեն ձեղքվում, սուր յեղերքներով բեկորներ է դառնում:

Սակայն, բնական բեկորներն անհարմար են: Նրանց ձևը հաճախ անհարմար է ձեռքերում բռնելու համար: Նրանց յեղերքները բավարար չափով սուր չեն լինում: Յեվ անա մարդիկ սկսեցին մշակել այդ գայլախաղերը: Գայլախաղի կտորից հեշտությունը կարելի չէ մանր բեկորներ հանել: Ամեն վոք կարող է այդ փորձն անել: Հասարակ քարով գայլախաղի կտորի մակերևույթին կամ յեղերքին խփելիս՝ գայլախաղից

բեկոր ե թռչում: Այդ միջոցով աձև բեկորին կարելի յե հարմար ձև տալ: Նախնական մարդիկ հենց այդպես ել պատ-
րաստում էյին իրենց համար կարևոր գործիքներ: Նրանք շինում էյին գայլախաղե կոցիներ, դանակներ և ուրիշ ինս-
տրումենտներ: Յեթե առաջին գործիքները շատ կոպիտ էյին
մշակված լինում, հետագայում մարդիկ սովորեցին նրան ավելի
կանոնավոր ձև տալ: Առանձնապես հաճախ եր գործադրվում
այն քարե գործիքը, վորը գիտնականներն անվանեցին
ձեռնուրագ: Ձեռնուրագ անունը ավին նրան այն պատճառով,
վոր նա առանց կոթի յեր գործադրվում: Այդ գործիքը աշ-
խատանքի ժամանակ պարզապես ձեռքումն էյին պահում:
Այդ ինստրումենտը ծառայում եր թե փայտ շինելու համար և
թե մորթված-քերթված անասունների միսը կտրտելու համար:
Նախնական մարդիկ մեծ խնամքով շինում և զարդարում
էյին իրենց քարե գործիքները:

Աստվածաշունչը քարե գործիքների մասին վոչինչ չի գրում:
Յեվ այդ բանը զարմանալի չե: Ծննդոց գիրքը, վորի մեջ նկա-
րագրվում ե Ադամի պատմությունը, գրված ե, ինչպես պարզե-
ցին գիտնականները, ընդամենը սրանից 2500 տարի առաջ:
Նա գրվել ե Պաղեստինում: Իսկ այդ ժամանակ այդ յերկրումն
արդեն վաղուց գործադրության մեջ էյին յերկաթե ինստրու-
մենտները և քարե գործիքների մասին հիշողությունն անգամ
վաղուց մոռացվել եր:

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐԴԻԿ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅԻՆ ԱՐԴՅՈՒՄ

Նախնական մարդիկ պետություն չունեյին: Նրանք ապ-
րում էյին 20—40 մարդուց կազմված փոքրիկ խմբերով: Կապիկ-
ների հոտից նախնական վայրենի մարդկանց այդ խմբերը տարբեր-
վում էյին նրանով, վոր նրանց անդամները կապված էյին մի-
տանական աշխատանքով: Միասին էյին աշխատում, միասին ել
ապրում: Այդպիսի խմբի բոլոր անդամները հավասար էյին:
Չկային վո՛չ խոզայիններ, վո՛չ սարուկներ, վո՛չ կալվածատերեր,
վո՛չ ճորտեր: Գազաններին միասին էյին փնտրում և ուտելիքը
նույնպես միասին էյին ուտու: Հողի մասնավոր սեփականու-
թյուն գոյություն չունեիր: Ամեն մեկը վորսում եր կամ ուտե-

լիք հավաքում վորտեղ ուզեր, ույն շրջանի սահմաններում,
վոր պատկանում եր նրա խմբին: Այդպիսի կարգերը նման են
կոմունիստական կարգերին, այդ պատճառով ել գիտնականները
այդ կարգերն անվանում են նախնական կոմունիզմ:

Ըստ աստվածաշնչի՝ դուրս ե գալիս, վոր սկզբում միայն
յլ ըլիւ մարդ գոյություն ունեյին—Ադամն ու Նրա կին Յեվան:
Քանի զեռ յերեխաներ չէյին ունեցել, նրանք իրենց համար մե-
նակ էյին ապրում: Գիտությունը ցույց ե տալիս, վոր աստվածա-
շնչական այդ առասպելը միանգամայն անհեթեթ ե: Մարդիկ
յերբեք մեկ-մեկ կամ յերկու-յերկու չեն ապրել: Իրենց ազ-
գականների՝ ժամանակակից կապիկների նման նրանք միշտ
խմբերով են ապրել:

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐԴԻԿ ԽՈՍԵԼ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՅԻՆ ԱՐԴՅՈՒՄ

Ըստ աստվածաշնչի՝ ամեն ինչ լավ ե դուրս գալիս: Հենց են
սկզբից Ադամը զրույց ե անում: Քանի զեռ Յեվան չկար, նա
զրույց ե անում կենդանիների հետ և նրանց անուններ ե դնում:
Հետո նա զրուցում ե Յեվայի և ասածու հետ: Յեվան զրույց
ե անում ոձի հետ: Աստված նույնիսկ ինքն իրեն հետ դատո-
ղություններ ե անում նախքան մարդուն ստեղծելը: Մեկ խոս-
քով, շատ են զրուցում:

Այս ամենը գուտ առասպելներ են: Ինչպես մենք գիտենք,
գիտությունն ապացուցեց, վոր առաջին մարդիկ խոսել չէյին
կարողանում: Այդ բանը պարզվեց հնագույն մարդկանց դան-
կարողություն: Այդ բանն հիման վրա: Նրանք կարող էյին ճշար,
գերի ուսումնասիրության հիման վրա: Նրանք կարող էյին ճշար,
կարող էյին նշաններով բացատրվել, ինչպես անում են համբերը,
յերբ նրանց պետք ե վորևե բան հաղորդել իրար: Բայց խոսել
նախնական մարդիկ վո՛չ գիտեյին և վո՛չ կարող էյին: Միայն
նախնական մարդիկ վո՛չ գիտեյին և վո՛չ կարող էյին: Միայն
յերկար զարգացումից հետո նրանց խոսքի որգանների կազ-
մությունն աշխարհ, վորովեց, վոր նրանք կարողացան անշատ-
անշատ հնչյուններ արձակել: Մարդիկ աշխատանքի շնորհիվ
խոսել սովորեցին, վորովհետև աշխատանքի ժամանակ մարդիկ
ստիպված էյին բավական յերկար բացատրվել իրար հետ:

ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵ՛Ր ԱՐԴՅՈՒ
ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐԿԱՆՑ ՄԵԶ

Հատ աստվածաշնչի՝ Ադամն իր ամբողջ կյանքում Յեվայի հետ եր ապրում։ Դուրս ե գալիս, վոր նրանց ամուսնությունն այնքան հաստատուն եր, ինչքան քրիստոնեյական ամուսնությունը։ Այդպէս եր արդյոք նախնական մարդկանց մեջ։ Վոչ, այդպես չեր։ Նույնիսկ այժմ ապրող սակավ կուլտուրական մարդկանցից վոմանց մեջ տղամարդու կապերը կնոջ հետ կարճաժամանակյա յեն։ Այդ կապերը հեշտությամբ խզվում են թե մեկ և թե մյուս կողմից։ Մայրն ե դաստիարակում յերեխաներին, վորոնք ամբողջ խմբի հսկողության տակն են գտնվում։ Յերեխաները չգիտեն, թե ով ե իրենց հայրը և հայրեր են անվանում բոլոր հասակավոր տղամարդկանց։ Այդպես եր նաև հնագույն մարդկանց մեջ։ Վոչ մի հաստատուն ամուսնություն ամբողջ կյանքի ընթացքում նախնական մարդկանց մեջ չի յեղեր։

ԱՍՏՆՈՒ ՀԱՎԱՏ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅԷՆ Ե ԱՐԴՅՈՒ
ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐԴԿԱՆՅ ՄԵԶ

Աստվածաշնչում գրված է, վոր Ադամն ու Յեփան հավատում էյին անտծուն: Երանց վորդիները՝ Կայենն ու Աբելը, աստծուն զոհ էյին մատուցանում: Աստվածաշնչում պատմվում է նույնիսկ, վոր այդ զոհի պատճառով Ադամի յերկու վորդերը կոպեցին, և Կայենն սպանեց Աբելին:


Իսկ Բնչպես ե իսկապես: Առաջին մարդիկ հավատում էին արդյոք աստծուն, թե վոչ: Գիտությունն ապացուցում ե, վոր վոչ: Առաջին մարդիկ վոչ մի գաղափար չունեին աստծու մասին: Աստծու հավատը միանգամից չերևաց: Միայն այն ժամանակ, յերբ մարդկային հասարակության մեջ յերևաց անհավասարությունը, յերևաց նաև վոգինների և աստվածներին հավատը, վորը արդարացնում ե անհավասարությունը և շահագործումը:

Մարդիկ միշտ յերեակայում են աստվածներին իրենց
յերկրավոր տիրոջների պատկերով: Վոչ թե աստված ստեղ-
ծեց մարդուն իր նմանությամբ, այլ աստծու պատկերը, հաս-

Վայց ողությունն ասածու մասին մարդիկ իրենք ստեղծեցին։ Առաջին մարդիկ չունեյին վոչ թագավորներ, վոչ իշխաններ, վոչ ազնվականներ, վոչ հարստաներ, այլ բոլորը հավասար էյին։ Այդ պատճառով ել նրանք չեյին հավատում վոչ շատ ասաված-
ների, վոչ ել մեն-միակ ասածու։

7. ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մարդն սկսեց մարդ դառնալ աշխատանքի շնորհիվ: Մըշտական համառ աշխատանքով մեր նախնիքը կապկանման կենդանիներից մարդիկ դարձան: Վոչ մի աստված չի ստեղծել մարդուն և չի ոգնել մարդուն նրա հետագա կատարելագործության մեջ: Սեփական ձեռքերով, ծանր պայքար մղելով բնության դեմ՝ մարդիկ կերտեցին իրենց կյանքը: Տերտերներն ու աստվածները այդ բանում նրանց չեյին ոգնում: Ընդհակառակը, ամեն տեսակի և ձևի պաշտամունքի սպասավորները միայն այն բանի մասին եյինք մտածում, վորպեսզի ժողովրդին խավարի և անկուլտուրականության մեջ պահեն: Միայն սեփական աշխատանքով և սեփական միաճանաչական ուժերով, հենվելով գիտության վրա, ամբողջ աշխարհի բանվորներն ու գյուղացիները հաջողությամբ կկառուցեն իրենց համար նոր կյանք, վորի մեջ չեն լինի վոչ կալվածատերեր, վոչ բուրժուազներ, վոչ առևտրականներ, վոչ կուլակներ, վոչ տերտերներ:



Մերագրի Ա. Տ. Միսյան
Զարկու քվեի 17 փետրվարի 1934 թ.
Տպի բալլասովի 16 մարտի 1934 թ.
Հրատ. № 111, Գրական № 7827 (բ)
Պատկեր № 65 Տրամ 2000
Թղթի չափը Բ. 62 սմ.^{1/2}
1/4 Բաթի քեր, 3/4 սպ. քեր (Խաղ. քերով 29,000 սպ. 6000)

Կոտայքի տպարան, Յերևան, Ալեքսանդրյան, 27

Переводчик Б. Егиазарян
Отв. редактор В. Тарахчан
Корректор А. Т.-Мкртчян
Сдано в набор 17 февр. 1934 г.
Подписано к печати 16 марта 1934 г.
Изд. № 111

Типография Партиздата ЦК КП(б)А
Эривань, ул. Аллавердян, 27

ՀՀ Ազգային գրադարան



NL0268605

9174 50 4.

14 577
ЦЕНА 50 К.



А. В. ШМИДТ

Как человек стал человеком

Оривань 1934. Партиздат.